

Վարդան Պ. Գևորգյան

## ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Նրանց հիմքում ընկած տեսական ընկալումների  
համաձիթում\*

**Բանալի բառեր** – սոցիալական օգնություն, սոցիալական աջակցություն, սոցիալական քաղաքականություն, սոցիալական ապահովություն, սոցիալական պաշտպանություն, սոցիալական օգնության արխայիկ պարադիգմա, օգնության քրիստոնեական պարադիգմա, օգնության պետական պարադիգմա, օգնության հասարակական-պետական պարադիգմա, օգնության սոցիետալ մոդել, սոցիալական պետություն:

### Մուտք

Բոլոր ժամանակներում հասարակությունները մեծ զգուշավորություն են ցուցաբերել պետության սոցիալական քաղաքականության միջոցով իրականացվող բարեփոխումների նկատմամբ: Պատմությանը հայտնի են բազմաթիվ օրինակներ, երբ նման որևէ անզգույշ բարեփոխման (ռեֆորմի) իրականացման փորձը հանգեցրել է զանգվածային անկարգությունների, խռովությունների, կառավարությունների հրաժարականների, իշխող ռեժիմների տապալման և այլն:

Պատմության ողջ ընթացքում սոցիալական բարեփոխումները լուրջ գլխացավանք են հանդիսացել բազմաթիվ կառավարողների համար, որովհետև վերջիններիս առջև մշտապես ծառայած են եղել առաջին հայացքից իրարամերժ հետևյալ հրամայականները. մի կողմից՝ ապահովել տնտեսության արդյունավետ գործառնությունը, բարձր արտադրողականությունը և խթանել ընդհանուր տնտեսական ակտիվությունը, որոնց համար հաճախ հարկ է լինում կրճատել սոցիալական արտոնություններն ու պետական սոցիալական օգնությունից օգտվող անձանց ու խմբերի շրջանակները, մյուս կողմից՝ հնարավորինս արդարացիորեն բաշխել ու վերաբաշխել հասարակական հարստությունը՝ հատկապես հոգ տանելով այն անձանց

Ժ (ԺԶ) փարի, թիվ 1 (61), հունվար-մարտ, 2018

ՎԿՎ համահայկական հանդես

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.10.2017:

ու խմբերի նկատմամբ, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույնաբար լուծել իրենց կենսագոյության ապահովման խնդիրները:

Պետական սոցիալական քաղաքականությունն ընդհանրապես, այդ թվում՝ պետական սոցիալական օգնության (աջակցության) ժամանակակից համակարգերը, ձևավորվել են մարդկության երկարատև պատմական զարգացման ընթացքում՝ անհատական օգտապաշտական և մարդասիրական մղումներից դրդված տարերային գործողություններից վերածվելով որոշակի գաղափարաարժեքային հայեցակարգերով ղեկավարվող բարդ իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի: Սոցիալական օգնության ձևերը, մեխանիզմները պատմականորեն մշտապես փոփոխվել են, հին, իրենց չարդարացրած ձևերին ու մեթոդներին փոխարինելու են եկել նորերը: Փոխվել են նաև այդ օգնությունից օգտվող անձանց շրջանակները, օգնությունը ցուցաբերող անձանց, խմբերի, ինստիտուտների նպատակներն ու մեթոդները, օգնության կազմակերպման գործընթացը կարգավորող կանոնները և այլն:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ այս ուղղությամբ տևական հաջողություն են ունեցել ոչ թե այն համակարգերը, որոնք ստեղծվել են այսրոպեական խնդիրների լուծման նպատակով՝ առանց հստակ գաղափարաարժեքային հիմնավորվածության, այլ նրանք, որոնք ստեղծվել են՝ հաշվի առնելով բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում մարդկության կուտակած դրական փորձը, ինչպես նաև հիմնված են եղել որոշակի գաղափարական հայեցակարգերի վրա, այսինքն՝ ունեցել են հստակ սոցիալական նպատակներ (այդ թվում՝ հեռանկարային), հստակ ձևակերպված խնդիրներ, այդ խնդիրների լուծմանն ուղղված հստակ մեխանիզմներ և այլն:

Ժամանակակից աշխարհի հասարակական կյանքի որևէ ոլորտում, այդ թվում՝ բնակչության սոցիալական պաշտպանության, անհնար է արդյունավետ բարեփոխումներ իրականացնել՝ չանդրադառնալով այդ ուղղությամբ մեր և այլ ժողովուրդների կուտակած պատմական փորձին, ավանդույթներին, գաղափարաարժեքային հայացքների համակարգերին: Սոցիալական պաշտպանության ոլորտում մարդկանց խնդիրների լուծմանն ուղղված գործընթացների ու մեխանիզմների զարգացման պատմական ընթացքի չիմացությունն ու անտեսումը կարող է հանգեցնել անարդյունավետ կամ իրենց չարդարացրած պատմական մոդելների ու մեխանիզմների վրա հիմնված ռեֆորմների իրականացման, որոնք ամենաքիչը թանկարժեք ռեսուրսների անտեղի վատնման պատճառ են դառնալու, իսկ որ առավել վտանգավոր է, կարող են հասցնել բնակչության որոշակի խմբերի վիճակի վատթարացման՝ հանգեցնելով հասարակական կայունության խաթարման, ցնցումների և այլ անցանկալի հետևանքների:

Հայաստանի Հանրապետությունը սահմանադրության մակարդակով ամրագրել է սոցիալական պետության կառուցման արժեք-նպատակը, որին հասնելու համար մշտապես պետք է իրականացնի սոցիալ-տնտեսակայն ոլորտի այնպիսի բարեփոխումներ, որոնք հնարավորություն կտան երկրում ստեղծել բնակչության սոցիալական պաշտպանության՝ սոցիալական պետության ժամանակակից ընկալումներին համարժեք

անընդհատ կատարելագործվող համակարգ: Արդյունավետ բարեփոխումների իրականացումը ենթադրում է ոչ միայն առաջ նայել, այլև հետ՝ անցյալից վերցնելու համար այն ամենը, ինչը կարող է օգտակար լինել մեր երկրի հետագա զարգացման համար, ինչպես նաև բացառել բոլոր այն ուղիները, որոնք պատմականորեն արդեն փորձարկվել են և հանգեցրել անցանկալի արդյունքների: Ներկայումս Հայաստանի կառավարությունը, ի դեմս ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ի թիվս այլ բարեփոխումների, ձեռնմուխ է եղել նաև սոցիալական պաշտպանության ոլորտում բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխմանը, որի նպատակն է երկրում ներդնել ինտեգրված (համալիր) սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ: Այդ համակարգի կարևորագույն մասն է կազմելու բնակչության սոցիալական օգնության (աջակցության) ենթահամակարգը:

Այս նկատառումներով, կարծում ենք, որ մեր երկրի բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում բարեփոխումներ նախաձեռնող ու իրականացնող անձանց համար օգտակար կլինի ամփոփ կերպով ծանոթանալ սոցիալական օգնության ժամանակակից հիմնական մոդելների պատմական զարգացման ընթացքին, որոնց արդյունքում ձևավորվել են նաև դրանց հիմքում ընկած տեսական պարադիգմները<sup>1</sup> (գաղափարակարգերը)՝ «սոցիալական աջակցություն», «սոցիալական օգնություն» **հասկացությունների ժամանակակից ընկալումների և սոցիալական աջակցության/օգնության ժամանակակից համակարգերի տեսքով:**

Տարածված այն կարծիքը, որի համաձայն՝ սոցիալական քաղաքականության տեսական ընկալումները, այդ թվում դրա բովանդակային առանցքը կազմող հիմնական հասկացությունները բացառապես 20-րդ դարի ծնունդ են, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Համաշխարհային պատմությունը, ընդհանրապես, եվրոպական երկրների պատմությունը, մասնավորապես տվել են բազմաթիվ օրինակներ, որոնց հիման վրա ականատես ենք լինում, թե ինչպես է աստիճանաբար ձևավորվում սոցիալական քաղաքականության հայեցակարգային ըմբռնումն ու համակարգված կառուցումը՝ որպես պետական սոցիալական դոկտրինա, մեթոդաբանություն, մոդել՝ հասնելով «համընդհանուր բարեկեցության պետության» տեսությանը: Նրա մեջ ի մի են բերվել սոցիալական քաղաքականության, որպես պետական իշխանության և հասարակական տարբեր ինստիտուտների կողմից սոցիալական կայունության և բարեկեցության ապահովմանն ուղղված գործունեության ավանդույթները: Աստիճանաբար սոցիալական քաղաքականության ոլորտի մեջ են մտել այնպիսի երևույթներ, ինչպիսիք են «սոցիալական համերաշխություն», «տնտեսական և սոցիալական պաշտպանվածություն», «ան-

1 «Պարադիգմ» (հունարեն՝ օրինակ, նմուշ) հասկացությունը գիտության փիլիսոփայության մեջ ներմուծել է Գ. Բերգմանը, իսկ լայնորեն տարածել է ամերիկացի ֆիզիկոս Ս. Կունը՝ 1962 թվականին: Ըստ Կունի՝ պարադիգմը բոլորի կողմից ճանաչում գտած գիտական նվաճում է, որը որոշակի ժամանակահատվածում գիտական հանրությանը տալիս է կոնկրետ հիմնավորի ձևակերպման և լուծման մոդել: Մ. Փեյնը «պարադիգմ» հասկացության տակ հասկանում էր սոցիալական մտածողության որոշակի ավանդույթ: Վերջինս սոցիալական աշխատանքի ոլորտում տարբերակում էր հարաբերականորեն տարբեր երեք տեսական մոտեցումներ. ա) պրագմատիկ ավանդույթ, բ) սոցիալ-արմատական (սոցիալիստական) ավանդույթ, գ) թերապևտիկ ավանդույթ: Տե՛ս **Выршиков А. Н.** и др., Теория социальной работы (учебно-методическое пособие), часть 1, Волгоград, 1999:

հատական և հասարակական պատասխանատվություն» և այլ հասկացությունները:

Բնակչության սոցիալական պաշտպանության ժամանակակից ոլորտի առանցքային հասկացություններից մեկը՝ «սոցիալական աջակցություն» հասկացությունը, ևս ձևավորվել է պատմական երկարատև զարգացման արդյունքում, չնայած այն, ինչպես նաև «սոցիալական ապահովություն», «սոցիալական օգնություն» հասկացությունները՝ որպես ուրիշ, օտար, ոչ արյունակից մարդկանց օգնության ցուցաբերման վարքն արտացոլող եզրույթներ, «սոցիալական պաշտպանություն» հիմնարար հասկացության ներքո վերջնականապես խմբավորվեցին միայն 20-րդ դարում:

Որոշ գիտնականների կարծիքով՝ այս հասկացությունների իմացաբանական շերտը կապված է «օգնություն» հասկացության սահմանման հետ, որն էլ տարբեր հիմքերով դասակարգման արդյունքում կարող է լինել մարդասիրական, նյութական, հոգևոր-բարոյական, արտակարգ, վերականգնողական և այլն<sup>2</sup>: Նույն՝ 20-րդ դարում ամբողջացավ օգնության փիլիսոփայությունը՝ որպես մշակութապատմական երևույթ և որպես գիտական գիտելիքի ինքնուրույն բնագավառ:

Մինչ օգնության արխայիկ պարադիգմի էության նկարագրությունը փորձենք որոշակի սոցիոլոգիական տեսությունների տեսանկյունից ցույց տալ ընդհանրապես սոցիալական օգնության/փոխօգնության երևույթների ծագումը, կենսասոցիալական հիմքերը ինչպես մարդու անհատական էության, այնպես էլ նրա խմբային/կոլեկտիվ կենսակերպը բնորոշող սոցիալական հանրույթների ձևավորման գործընթացներում:

## 1. Սոցիալական օգնության ծագումը մեկնաբանող տեսությունները

Սոցիալական աշխատանքի տեսության և պատմության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում սոցիալական օգնության ծագման հարցը: Այդ հարցի շուրջ ձևավորվել են մոտ մեկ տասնյակ հայեցակարգեր, որոնք այդ երևույթի ծագման հետ կապված առաջադրում են ինչպես որոշակիորեն նման, այնպես էլ նույնիսկ տրամագծորեն հակառակ դրույթներ:

Ռուս նշանավոր մտածող Պ. Ա. Կրոպոտկինը<sup>3</sup>, ով ավելի հակված էր սոցիալական երևույթներին տալ մեխանիստական, նատուրալիստական մեկնաբանություններ, «Փոխօգնությունը որպես էվոլյուցիայի գործոն» (1907 թ.) աշխատությունում մարդկանց մոտ բարոյական զգացմունքների (այլասիրություն, օգնություն, արդարություն և այլն) ծագումը բացատրում է բնության մեջ միմյանց օգնելու փաստով, որը հանդես է գալիս որպես ինքնապաշտպանական բնագոյ: Կրոպոտկինն այն կարծիքին էր անգամ, որ բարոյական սկիզբը գոյություն ունի նույնիսկ կենդանական աշխարհում, և հենց նա է էվոլյուցիայի իրական շարժիչը: **«Բարոյականությունը՝ կլիմայի, ջրհեղեղների, փոթորիկների, սառնամանիքների, ցրտի և**

<sup>2</sup> Տես նույն տեղում, էջ 9:

<sup>3</sup> Պյոտր Ալեքսեևիչ Կրոպոտկին (1842-1921) ռուս հեղափոխական-անարխիստ, նշանավոր պատմաբան, փիլիսոփա, հրապարակախոս, անակիզմի առավել ազդեցիկ գաղափարախոսներից մեկը, աշխարհագրագետ, գեոմորֆոլոգ:

այլ բնական արհավիրքների դեմ կենդանական աշխարհի կողմից գոյության համար մշտապես մղվող մեծ պայքարում լավագույն զենքն է (ընդգծումը մերն է - Վ. Գ.)»<sup>4</sup>: Նա փորձում էր ապացուցել, որ բնության մեջ միայն առաջին հայացքից է թվում, թե հաղթում են գիշատիչները, քանի որ առկա են բազմաթիվ «ակնհայտ թույլ» տեսակներ (մրջյուններ, մեղուներ, աղավսիներ, կրծողներ, եղջերուներ և այլն), որոնք իրենց ներհատուկ շփման և փոխօգնության հատկանիշների շնորհիվ թշնամիների դեմ շատ ավելի հաջող են մղում գոյության կռիվը, քան իրենցից ակնհայտ ուժեղ գիշատիչները: Փոխօգնության գործելակերպը բնության մեջ անկասկած տանում է առաջընթացի:

Ըստ Կրոպոտկինի՝ բարության մասին հասկացությունը մարդը բխեցնում է կենսաբանական տեսակների փոխհարաբերությունների դիտարկման հիման վրա, ուստի մարդկանց մեջ ևս **բարոյական զգացումները բնական ընդունակություն է, միանգամայն այնպիսին, ինչպիսին են շոշափելիքի և հոտառության զգայությունները**: Բարոյական է այն, ինչը օգտակար է ցեղի պահպանման համար, անբարոյական է այն, ինչը խանգարում է դրան: Սոցիալական օգնության՝ որպես ցեղային օգնության մեխանիզմի, ի հայտ գալը հիմնավորվում է նպատակահարմարությամբ, մարդու՝ որպես կենսաբանական տեսակի, բնական բնագոյային վարքով, որն ուղղված է բնական ընտրության պայմաններում անհատի (առանձնյակի) գոյությանը և տեսակի շարունակությանը:

Սոցիալական օգնության ծագման կենսաբանական հայեցակարգի կողմնակիցները մարդկանց միջև փոխօգնության հարաբերությունների ձևավորումը հիմնավորում են նրանց կենդանական աշխարհին մոտ լինելով և տեսակի պահպանման ու վերարտադրության բնագոյներով: Որպես դրա ապացույց մատնանշում են այն, որ կենսաբանական տեսակների հանրույթները (հոտ, երամ, ոհմակ և այլն) խմբային ինքնապաշտպանության նպատակներով կիրառում են փոխօգնությունը, մասնավորապես՝ էգերը հաճախ կերակրում են իրենց հանրույթի որբացած ձագերին, խմբի ուժեղ անդամները որսից բաժին են հանում ծեր և թույլ անդամներին (գլխավորապես՝ մնացորդներից), որսի, կենսատարածքի պաշտպանության ժամանակ, որպես կանոն, օգնում են միմյանց և այլն:

Օգնության/փոխօգնության կենսաբանականացման հայեցակարգի կողմնակիցների կարծիքով, կենդանական աշխարհը ապրում է փոխօգնության օրենքներով, որի հիմքում ընկած օգնությունը հիմնված է անպայման ռեֆլեքսների, բնագոյների վրա: Մարդը՝ որպես վայրի կենդանական աշխարհից երբևէ դուր եկած կենդանի էակ, պահպանել է փոխօգնության բնագոյը, որն էլ դարձել է հետագայում ձևավորված սոցիալական օգնության երևույթի հիմքը:

Այս հիմնավորումը, սակայն, խոցելի է այն առումով, որ չի դիտարկվում որպես կենդանական աշխարհի բոլոր տեսակներին բնորոշ, առավել ևս մշտապես առկա համընդհանուր հատկություն: Կենդանական աշխարհը, միևնույն ժամանակ, տալիս է նաև միանգամայն հակառակ օրինակներ. որբացած ձագերին կերակրելուց հրաժարման, իր տեսակի ներկայացու-

4 Крoпoткин П. А. Этика. Происхождение и развитие нравственности. М., «Политиздат», 1991. с. 14.

ցիչների սպանելու և ուտելու, վտանգի կամ վիրավորվելու ժամանակ իր խմբի անդամին չօգնելու բազմաթիվ դեպքեր: Այսինքն՝ կենդանիների օրինակը ցույց է տալիս, որ նրանց ավելի շուտ բնորոշ է ոչ միայն խմբային ինքնապաշտպանությանն ուղղված փոխօգնության բնագոյրը, այլև լրիվ հակառակ՝ բոլորն ընդդեմ բոլորի բնագոյր՝ կախված կենսական իրավիճակից: Եթե կենդանիներին օգնության/փոխօգնության գործընթացների են մղում ֆիզիոլոգիական պատճառները, անպայման ռեֆլեքսները, ապա մարդկանց՝ գիտակցությունը, այլ մարդկանց դժվարին իրավիճակում օգնություն ցուցաբերելու անհրաժեշտության գիտակցումը: Այդ իսկ պատճառով մարդկանց և կենդանական աշխարհում օգնությանփոխօգնության հարաբերությունների նմանությունը միայն արտաքին է, էությունը դրանք տարբեր են:

Ըստ Կ. Պոլանիայի և Բ. Մալինովսկու՝ սոցիալական օգնության հարաբերությունները ծագել են **ռեցիպրոկացիայի** (օգնության նպատակով կենցաղում և տնտեսական ոլորտում բարիքների փոխանակման), ինչպես նաև **ռեդիստրիբուցիայի** (ավելացած մթերքների բաշխման) երևույթների համակարգային միասնականության հիման վրա<sup>5</sup>:

Սակայն այստեղ կարևոր է հասկանալ, որ ռեցիպրոկացիան և ռեդիստրիբուցիան նույն կարգի երևույթներ չեն և պատմականորեն հանդես են եկել ոչ միաժամանակ: Փոխօգնությունն ու ապրանքների, ծառայությունների փոխանակումը մարդկային հասարակության գոյության և ինքնակազմակերպման մեխանիզմ ու գործոններ են, ուստի ռեցիպրոկացիոն կապերն ու հարաբերությունները հանդես են եկել մարդկության զարգացման ամենավաղ փուլերում:

Ռեդիստրիբուցիայի ձևավորումը տեղի է ունեցել շատ ավելի ուշ, քանի որ վերջինիս համար անհրաժեշտ էր առնվազն երկու գործոնների առկայություն, մասնավորապես. ա) նյութական բարիքների ավելցուկ՝ որպես փոխօգնության հարաբերությունների նյութական հիմք, բ) մարդկային կոնկրետ հանրույթի համար օգտակար գործունեության մեջ ներդրման աստիճանից անկախ, ոչ համարժեք, տնտեսական առումով ոչ արդյունավետ, ոչ փոխադարձ հասարակական օգնության անհրաժեշտության հասարակական գիտակցություն:

Այսպիսով ռեցիպրոկացիայի և ռեդիստրիբուցիայի համակարգային միասնության մասին դրույթը կարելի է ընդունել միայն պայմանականորեն՝ նկատի ունենալով, որ այն վերաբերում է միայն հասարակության զարգացման կոնկրետ պատմական փուլին՝ տոհմացեղային հարաբերությունների ծաղկման դարաշրջանին (ըստ Լ. Մորգանի՝ բարբարոսության բարձրագույն աստիճանը):

Մ. Վ. Ֆիրսովը<sup>6</sup> օգնության հարաբերությունների ձևավորումը դիտում է որպես տոհմի հասարակական այն տարածքի պահպանման ռեակցիա, որտեղ իրացվում են տոհմի անդամ հանդիսացող անհատների հոգեկան

5 Տե՛ս «Социально-экономические отношения и соционормативная культура». М., «Наука», 1986.

6 **Ֆիրսով Միխայիլ Վասիլիչ**, ռուս ժամանակակից գիտնական, պ.գ.դ., ՌԴ Սոցիալական գիտությունների, Սոցիալական կրթության ակադեմիաների, ինչպես նաև Սանկտպետրբուրգի գիտությունների միջազգային ակադեմիաների իսկական անդամ, Մոսկվայի պետական սոցիալական համալսարանի սոցիալական աշխատանքի ակադեմիայի տնօրեն:

գործառույթները, էթնիկական և սոցիոմշակութային ինքնությունը, կանխվում է մարդուն բնորոշ միայնակության վախը, տիրապետում է ազատությունը, հավասարությունն ու եղբայրությունը: Նա նշում է. «Այդ կորդինատների՝ ամբողջականության և միայնակության վախի հատման կետում ձևավորվում են կեցության որոշակի առասպելներ (միֆեր), որոնք պահանջում են ամբողջության պահպանման և պաշտպանության մեխանիզմների ստեղծում: Մենք կարծում ենք, որ օգնության և պաշտպանության մեխանիզմների՝ որպես որոշակի ամբողջության, պահպանման մեխանիզմների առանձնացումը, ի սկզբանե կապված է եղել այդ գործընթացների նվիրականացման, աստվածացման հետ (ընդգծումը մերն է – Վ. Գ.)»<sup>7</sup>:

Այս առումով նպատակահարմար է տոհմը դիտել ոչ թե միայն որպես ինքնանպատակ, սոցիալական, հոգեբանական և գաղափարախոսական գործառույթներ իրականացնող «ինչ-որ ամբողջություն», այլ որպես հնագույն մարդկանց կոնկրետ պահանջումներին, առաջին հերթին՝ սննդի ապահովման եղանակ: Այդ իմաստով հնագույն մարդուն տոհմը ամենայն հավանականությամբ հետաքրքրում էր որպես մի կառույց, որը վերահսկում կամ տիրապետում էր կյանքի համար անհրաժեշտ տնտեսական ռեսուրսները, առաջին հերթին այն տարածքը, որտեղ հնագույն մարդը որս էր անում, ձուկ էր բռնում, զբաղվում էր հավաքչությամբ, իսկ ավելի ուշ՝ անասնապահությամբ կամ հող մշակելով:

Բնական ընտրության պայմաններում հենց այդ ռեսուրսներով և ոչ թե որևէ այլ բանով էին պայմանավորված տոհմի (ցեղի) մեծությունը, ուժը և կենսունակությունը, քանի որ հենց ռեսուրսների քանակից (ավելցուկից կամ սղությունից) էր կախված տոհմի ինչպես աշխատունակ, այնպես էլ անաշխատունակ անդամների (երեխաների, ծերերի ու հաշմանդամների և այլն) կյանքը: Պատահական չէր, որ ցեղերը անընդհատ պատերազմներ էին մղում իրենց տիրապետության տակ եղած ռեսուրսների պահպանման կամ նոր ռեսուրսների նվաճման համար:

Սոցիալական օգնության/փոխօգնության երևույթների ծագման առավել հետաքրքրական տեսություն է առաջադրել Պ. Սորոկինը<sup>8</sup>, որը կարելի է գնահատել որպես նշված երևույթների կենսաբանականացման և սոցիոլոգիականացման հայեցակարգերի համադրման հիման վրա ստեղծված տեսություն: Պ. Սորոկինն իր «Հեղափոխության սոցիոլոգիա» աշխատությունում տարբերակում է բնագոյների (ռեֆլեքսների) երկու խումբ՝ ոչ պայմանական (բնածին) և պայմանական (հասարակության կողմից ներարկված), որոնք դիտարկում է որպես մարդու վարքի կարգավորման գործոններ: Դա թույլ է տալիս ենթադրել, որ սոցիալական օգնության

7 Фирсов М. В. Введение в теоретические основы социальной работы (историко-понятийный аспект). – М., Ин-т практической психологии, Воронеж, МОДЭК, 1997, с. 58.

8 Պիտերիմ Սորոկին (1889–1968), ռուսական ծագումով ամերիկյան սոցիոլոգ: Սոցիոլոգիական «ինտեգրալային», սոցիալական ստրատիֆիկացիայի, սոցիալական շարժունության, մարդկության քաղաքակրթական զարգացման աստիճանների տեսությունների հեղինակը: Պ. Սորոկինը, ըստ էության, մշակել է նաև սոցիալական հեղափոխությունների իր տեսությունը, որում որպես սոցիալական հեղափոխության հիմնական պատճառներ է նշում բնակչության մեծամասնության հիմնական պահանջումների ճնշվածությունը գոյություն ունեցող հասարակական կարգի կողմից, ինչպես նաև այդ հասարակարգի ոչ արդյունավետությունը, հասարակական կարգը պահպանող ուժերի թուլությունը:

հարաբերությունների ձևավորման վրա ազդում են մարդկանց ինչպես կենսաբանական, այնպես էլ սոցիալական բնագոյները: Ընդ որում, գիտությունն ապացուցել է, որ կենսաբանական կամ ոչ պայմանական ռեֆլեքսները, որոնք ապահովում են շրջակա միջավայրին մարդու հարմարվելու և կենսապահովման գործառնությունները՝ ավելի ուժեղ են, քան պայմանական ռեֆլեքսները:

Նկատի ունենալով այն, որ, համենայն դեպս, իր ժամանակներում չկար ոչ պայմանական ռեֆլեքսների միջազգայնորեն ընդունված դասակարգում, Պ. Սորոկինն առանձնացնում է այդպիսի ռեֆլեքսների 10 տեսակ, մասնավորապես՝ անհատական ինքնապաշտպանության (այդ թվում տեսակի շարունակման), սեփականության, որն իրականացվում է արտաքին աշխարհում մարդուն անհրաժեշտ օբյեկտի, բարիքի նվաճմանը, յուրացմանն ուղղված գործողությունների միջոցով, ազատության, ինքնիրացման (ինքնադրսևորման), հոտային կենսակերպի, մրցակցայնության, իշխման, խմբային պաշտպանության (մերձավորների որոշակի խմբի պաշտպանություն, այդ թվում էթոսի, պետության, եկեղեցու, կուսակցության և այլն):

Պայմանական ռեֆլեքսները ձևավորվում են ոչ պայմանականների հիման վրա: Դրանք մարդու կյանքի առաջին իսկ օրերից ներարկվում են հասարակության կողմից՝ հասարակական վերահսկման նպատակով: Պետությունն ու սոցիալական ինստիտուտները մշակում են վարքի իրավական, բարոյական, կրոնական, գեղագիտական նորմեր ու կանոններ և դրանք պայմանական ռեֆլեքսների տեսքով ներարկում են հասարակության անդամներին՝ ապահովելով սոցիալական խաղաղություն և կայունություն: Մարդու ոչ պայմանական ռեֆլեքսները մշտապես դիմադրում են պայմանականներին: Օրինակ՝ նվաճման ռեֆլեքսը մշտապես դրդում է մարդուն յուրացնելու իր համար անհրաժեշտ իրերը, բարիքները, սակայն հասարակության, այդ թվում՝ պետության, եկեղեցու կողմից ներարկված իրավական և բարոյական նորմերը («մի գողացիր») որոշակիորեն զսպում են այն:

Հասարակության գոյության և կայունության համար մարդու մեջ կենսաբանական սկիզբները պետք է հավասարակշռվեն սոցիալական վարքաձևերով, այլապես ոչ պայմանական ռեֆլեքսները (բնագոյները) կդառնան գերակա և կավերեն բոլոր սոցիալական կապերն ու հարաբերությունները: Մարդու ռեֆլեքսների հավասարակշռությունը պահպանելու համար, հասարակությունը մշտապես պետք է հոգ տանի, որ թույլ չտա առավել ուժեղ ոչ պայմանական ռեֆլեքսների «ոտնահարում»՝ ուժեղացնելով սոցիալական ռեֆլեքսները:

Պ. Սորոկինը **ինքնապահպանման բնագոյը համարում է առավել տիրապետող ոչ պայմանական ռեֆլեքսը**, որն իր հերթին առավել ուժեղանում է այդ ռեֆլեքսի հետ սերտորեն փոխկապված սեփականության, իշխելու, մրցակցայնության ռեֆլեքսների համադրությամբ, որոնք ունեն մրցակցային բնույթ և դրսևորվում են այլ մարդկանց հետ հարաբերություններում: Այդ իսկ պատճառով մարդուն ի բնե բնորոշ է միայն ինքնօգնության, ինքն իր համար հոգ տանելու բնագոյը: Միննույն ժամանակ,



ինքնապահպանության բնագոյին համապատասխանում է նաև փոխօգնությունը, որը հիմնվում է ծառայությունների համարժեք փոխանակության (դու՛ ինձ, ես՝ քեզ) վրա, քանի որ համապատասխանում է հասարակությունում անհատի եսասիրական պահանջմունքի բավարարմանը՝ նույն այդ հասարակության միջոցով: Տեսականորեն՝ յուրաքանչյուրը բավարարում է իր պահանջմունքը մյուսի մասնակցությամբ, որի արդյունքում որևէ մեկի եսասիրական շահերը չեն ոտնահարվում և իրացվում են հարաբերությունների մասնակիցների ոչ պայմանական ռեֆլեքսները:

Պ. Սորոկինը **խմբային պաշտպանության (մերձավորների որոշակի խմբի պաշտպանությունը) ոչ պայմանական ռեֆլեքսը, որն ընկած է սոցիալական օգնության հիմքում, համարում է առավել թույլ ոչ պայմանական ռեֆլեքսներից կամ բնագոյներից մեկը:** Դրա համար էլ, նրա կարծիքով, սոցիալական օգնության հակումը ի սկզբանե շատ քիչ է բնորոշ եղել մարդուն:

Երբ հասարակությունը գիտակցում է սոցիալական օգնության պահանջմունքը՝ ունենալով դրա իրականացման տնտեսական հնարավորությունը, սկսում է լայն առումով՝ սոցիալական նորմերի միջոցով, հզորացնել խմբային պաշտպանության ոչ պայմանական թույլ ռեֆլեքսները (ներարկելով սոցիալական օգնության ռեֆլեքսի պայմանները)՝ դրանով իսկ փորձելով արգելակել, զսպել սոցիալական օգնությանը հակադրվող ուժերը ոչ պայմանական ինքնօգնության ռեֆլեքսների դրսևորումները:

Սոցիալական տարբեր ինստիտուտների կողմից սահմանվում են իրավական, բարոյական, կրոնական և այլ նորմեր՝ ուղղված մարդկանց՝ սոցիալական օգնության անհրաժեշտության մասին գիտակցության խորացմանը և հարաբերությունների հաստատմանը: Հասարակությունը հասնում է անհատների ոչ պայմանական և պայմանական ռեֆլեքսների հավասարակշռության, որի դեպքում կայուն կերպով վերատադրվում է սոցիալական օգնությունը՝ որպես հասարակական հարաբերություն: Սակայն այդ հավասարակշռությունը հաստատուն չէ, այն կարող է խախտվել՝ կապված հասարակության տնտեսական կամ քաղաքական վիճակի փոփոխությունների հետ, երբ կտրուկ վատթարանում է բնակչության մեծամասնության կենսամակարդակը:

Ինքնապաշտպանական բնագոյների «ոտնահարման» դեպքում (օրինակ, երբ մարդը չի կարողանում բավարարել կյանքի համար ամենակարևոր՝ սննդի, կացարանի, տեսակի շարունակման, ազատության և այլ պահանջմունքները) դրանք ակտիվանում են և ձնշում են մնացած ավելի թույլ ռեֆլեքսներին: Հիմնարար պահանջմունքների ու շահերի իրացման հնարավորությունների կտրուկ նվազումը փոխում է մարդկանց վարքը, կենսաբանական սկիզբները սկսում են գերակայել կոլեկտիվիստական վարքաձևերի նկատմամբ:

Ինքնապաշտպանական բնագոյի ազդեցության տակ, անհատները հրաժարվում են պաշտպանել ուրիշներին, ավելին, սկսում են կենսական ռեսուրսների համար մրցակցել միմյանց հետ՝ ձգտելով ձեռք բերել այդ ռեսուրսները՝ ի հաշիվ հասարակության առավել թույլ անդամների: Նման իրավիճակների առաջացման հետ կապված Պ. Սորոկինը նշում է. «**վարքի**

**սոցիալական ձևերի կեղևը ճաքում է և կտոր-կտոր է լինում, կենսաբանական ազդակների կրակը դուրս է ժայթքում և մշակութային սոցիուսի (socius) փոխարեն դուրս տեսնում եք վայրի կենդանուն, որը բոլորովին նման չէ ձեզ ծանոթ մշակութային էակին»<sup>9</sup>:**

Նման դեպքերում օգնության՝ հասարակության կողմից ներարկված բարոյական, իրավական, կրոնական նորմերը և կանոնները դադարում են գործել: Իսկ երբ դա զանգվածային բնույթ է ստանում, հասարակությունը օրակարգից հանում է սոցիալական օգնության ցուցաբերման նպատակը և փակում է սոցիալական օգնության ինստիտուտները:

Այսպիսով, երբ սոցիալական օգնության հարաբերությունները դիտարկում ենք կենսաբանական և սոցիալական բնագոյների փոխազդեցության մասին Պ. Սորոկինի տեսության լույսի ներքո, ապա ստացվում է, որ դրանք հանդիսանում են օգնության կանոնների ու հարաբերությունների ստեղծման ուղղությամբ հասարակական ինստիտուտների ջանքերի, մասնավորապես՝ խմբային պաշտպանության ոչ պայմանական ռեֆլեքսի հիման վրա մշակված պայմանական ռեֆլեքսների տեսքով հասարակության անդամներին ներակելու արդյունք: Սոցիալական օգնությունը, չունենալով ամուր կենսաբանական հիմքեր, իր բնույթով անկայուն է և կախված է բնակչության կենսականորեն կարևոր պահանջունքների բավարարման և սոցիալական օգնության նորմերի ու կանոնների մասին հասարակական գիտակցության մեջ «արմատավորվածության» աստիճաններից: Այդ իսկ պատճառով սոցիալական օգնության «դեմքը» (բնույթը, չափերը, ուղղվածությունը, մեխանիզմները և այլն) պատմական բոլոր ժամանակներում որոշվում է հասարակության ունեցած տնտեսական ռեսուրսներով և տիրապետող գաղափարախոսությամբ:

## 2. Սոցիալական օգնության արխայիկ պարադիգման

Օգնության մասին առաջին պատկերացումների ձևավորման միտումներն ի հայտ են գալիս դեռևս տոհմատիրական հասարակության շրջանում, երբ տոհմային համայնքներում սկսեցին ձևավորվել ռեցիպրոկացիայի և ռեդիստրիբուցիայի մեխանիզմները: Արդեն այդ ժամանակ տարորոշվեցին օգնության սուբյեկտներն ու սկզբունքները, որոնք կարգավորում էին տոհմի շրջանակներում տարբեր բարիքների փոխանակման հարաբերությունները<sup>10</sup>: Այդ շրջանում ձևավորված սոցիալական օգնության հարաբերությունների էությունը բացատրվում է **օգնության արխայիկ պարադիգմի** միջոցով:

Այս պարադիգմը բխում է հեթանոսական աշխարհընկալումից, որի շրջանակներում մարդն իրեն չէր անջատում շրջապատող բնությունից և ընդհանրապես տիեզերքից՝ իրեն դիտելով դրանց, ինչպես նաև իրեն շրջապատող մարդկանց (համայնքի) հետ միասնականության մեջ: Հեթանոսական համայնքի կյանքի փիլիսոփայությունը սահմանում էր փոխարձ օգնության և պաշտպանության ձևերը: Առավել ընդունված մոդելը

<sup>9</sup> Сорокин П. А. Социология революции, М., «Астрель», 2008, с. 42.

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 20:

«բոլորի կապվածությունն էր բոլորի հետ», որը ռուսական իրականության մեջ ստացել է «крыговая порыва»<sup>11</sup> անվանումը, որի միջոցով էլ իրականացվում էին օգնության հասարակական (համայնքային) ձևերը: Օգնության այս մոդելը, որը ռուսական գյուղական համայնքներում պահպանվել էր ընդհուպ 20-րդ դարակիզբը, մարդկանց փոխօգնության փակ ձև էր: Այն ենթադրում էր ամբողջ համայնքի պատասխանատվություն համայնքի յուրաքանչյուր անդամի համար, այդ թվում՝ նրանց կողմից կատարած իրավախախտումների/հանցագործությունների, ունեցած տնտեսական պարտավորությունների՝ չվճարած հարկերի, տուրքերի, պարտքերի, ինչպես նաև կենսագոյության նվազագույն պայմանների ապահովման համար, եթե համայնքի անդամն ի վիճակի չէր դրանք ինքնուրույնաբար անել: Հենց օգնության այդ ձևերի հիման վրա էլ ռուսական իրականության մեջ ձևավորվեցին աղքատներին կերակրելու և ծերերին ու հաշմանդամներին խնամելու սոցիալական ինստիտուտները: Նույն այդ ռուսական իրականության մեջ հայտնի էին նաև «իշխանական խնջույքները», ինչպես նաև փրկագնի միջոցով գերիների ազատումը (այս վերջինն ավելի շատ տարածված էր դրուժինիկների շրջանում): Այս մոդելում օգնության և պաշտպանության գլխավոր սուբյեկտ էր հանդիսանում տվյալ տարածքի իշխանը:

Փրկագնի միջոցով գերիների ազատման պրակտիկան ավելի ուշ՝ 1918-1920 թթ., կիրառվել է նաև Հայաստանի առաջին Հանրապետությունում, երբ Խնամատարության և վերաշինության նախարարության՝ Հայաստանից դուրս գտնվող տարածաշրջանային ներկայացուցչությունների միջոցով պետական միջոցներով իրականացվում էին «մահմեդականների ձեռքում գտնվող հայազգի որբ երեխաների ու գերեվարված կանանց հետ գնելու և Հայաստան վերադարձնելու» գործողություններ<sup>12</sup>:

**Բոլոր ժամանակներում և ամենուրեք սոցիալական օգնության/աջակցության համակարգերը հետևել են իրենց համար ինքնուրույնաբար հոգ տանելու հնարավորություն չունեցող (կարիքավոր և տարբեր պատճառներով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված) մարդկանց համար հոգ տանելու գլխավոր սկզբունքին:**

Հայտնի է, որ համաշխարհային պրակտիկայում կարիքավոր մարդկանց՝ մարդասիրական նկատառումներով կազմակերպված կերպով սոցիալական ծառայությունների տրամադրման պատմությունն սկսվում է դեռևս մ.թ.ա. 1750 թվականից՝ Բաբելոնում, այսպես կոչված, **Արդարության կողերի** ստեղծումով: Դրանք քաղաքացիական ակտեր էին, որոնք մարդկանց՝ մերձավորի նկատմամբ սիրո և աղքատների նկատմամբ հոգածության կոչ էին անում: Այդ ժամանակներում մարդկանց օգնելու,

11 Այս հասկացությունը հետագայում ստացավ նաև բացասական իմաստ՝ արտացոլելով մաֆիոզ կառույցներում և ընդհանրապես հանցագործ շրջանակներում հանցագործության փաստով մարդկանց փոխկապվածության հիմքով կոլեկտիվ պատասխանատվության, բոլորը՝ բոլորին հսկելու երևույթը, ինչպես նաև որևէ սոցիալական համակարգում (կառավարչական հաստատություններում, մասնագիտական համաքություններում) կոլեկտիվ պատասխանատվության կամ կոլեկտիվ անպատասխանատվության երևույթները, որի առավել ցայտուն դրսևորումներն են մասնագիտական սխալի պարագայում պաշտոնյաների կամ որևէ ոլորտի մասնագետների կողմից մեկը մյուսի սխալը չմատնանշելու, կատարած հանցագործությունը թաքցնելու, պաշտպանելու երևույթները և այլն:

12 Տե՛ս ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն-90: Տարեգրություն (1918-2008 թթ.), Եր., 2008, էջ 8:

նրանց մասին հոգալու գործունեությունն արտահայտվում էր բարեգործության, մարդու կրոնական պարտքի, կարիքավորների նկատմամբ մարդասիրական մղումներով ծառայությունների տրամադրման ավանդույթների տեսքով, որոնք ձևավորված համակարգ էին հիշեցնում:

Հին Հունաստանում հոգևոր փորձի կուտակմանը զուգընթաց հասարակությունն սկսեց իր կեցության բազմաթիվ ոլորտներից տարանջատել հատուկ մի ոլորտ, որտեղ դրսևորվում էին մարդկանց ընկերական զգացմունքները, բարոյական կապերն ու հարաբերությունները: Այսպիսով ծնունդ առավ **Ֆիլանտրոպիան** (սերը դեպի մարդը)՝ մի անհատի՝ մյուսի նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի դրսևորման ոլորտը: Ֆիլանտրոպիան ամենից առաջ ուներ սոցիալական ուղղվածություն կամ բնույթ, այսինքն՝ դրա տակ նկատի էին առնվում ոչ թե ազգակցական կամ արյունակցական կապերով կապված մարդկանց, այլ «օտար», ոչ արյունակից մարդկանց միջև բարյացակամ հարաբերությունները, որոնք բխում էին նրանց մեկ այլ ընդհանրությունից՝ Աթենական պետության քաղաքացի լինելու փաստից:

Հին Հունաստանում գոյություն ունեցող սոցիալական օգնության համակարգերի մասին բավականաչափ հետաքրքիր փաստեր է բերում ժամանակակից ռուս հետազոտող Մ. Գրիշինը<sup>13</sup>: Նա մասնավորապես գրում է, որ Արիստոտելը, Պլուտարքոսը և անտիկ այլ հեղինակները վկայում են, որ Պերիկլեսի<sup>14</sup> կառավարման շրջանում (որը նաև համընկնում է հույն-պարսկական երկարատև պատերազմներին հաջորդած շրջանի հետ) Աթենական պետությունում գոյություն է ունեցել բնակչության (քաղաքացիների) սոցիալական օգնության բավականաչափ լայն համակարգ, ինչը հետագա հետազոտողների մեծ մասը կապում է Աթենքում ստրկատիրական ժողովրդավարության հաստատման հետ:

Սոցիալական օգնության ավանդույթի ձևավորման նախադրյալներն ու աղբյուրներն ուսումնասիրող գիտնականներն այդ ավանդույթի՝ հարուստների ու աղքատների միջև փոխզիջման (կոմպրոմիսի) քաղաքականության առաջացումը կապում են դեռևս Սոլոնի<sup>15</sup> հետ, որն ստեղծել էր արհեստներով զբաղվելու, ինչպես նաև հաշմանդամ զինվորներին պետության հաշվին պահելու մասին օրենքներ: Հին Հունաստանում Պե-

13 Տե՛ս **Гришин М.**, Проблемы социальной политики Афинского государства 1-ой половины 5-ого века д.н.э. [www.centant.ru/centrum/publik/confcent/2001-03/grishin.htm](http://www.centant.ru/centrum/publik/confcent/2001-03/grishin.htm)։

14 **Պերիկլես** (մ.թ.ա. մոտ 494-429 թթ.)։ Աթենական պետական գործիչ, ստրատեգ, նշանավոր հռետոր և զորավար, այթենական ժողովրդավարության հիմնադիր հայրերից, ով ունենալով արիստոկրատական ծագում, հանդես էր գալիս ի պաշտպանություն ժողովրդավարական կարգերի։ Մ.թ.ա. 461 թվականից ձեռնարկել է մի շարք ժողովրդավարական ուղղվածության բարեփոխումներ, որոնց արդյունքում Աթենական պետությունը հասել է ոչ միայն ժողովրդավարության, այլև իր ռազմական, տնտեսական և մշակութային վերելքի առավելագույն աստիճանին։

15 **Սոլոն** (հին հուն. Σόλων; ապրել է մոտավորապես մ.թ.ա. 640 - 559 թթ.), աթենական քաղաքական գործիչ, բանաստեղծ, օրենսդիր, հին Հունաստանի «յոթ իմաստուններից» մեկը։ Առաջին սրբազան պատերազմի արդյունքում դարձավ Աթենքի ամենագղեցիկ քաղաքական գործիչներից մեկը՝ արտակարգ լիազորություններով ընտրվելով Աթենական պետության առաջնորդ և ձեռնարկելով մի շարք բարեփոխումներ (հողի համար ունեցած պարտքերից որոշակի խավերի ազատումը, գույքային ցենզի սահմանումը, երդվյալների դատարանի ստեղծումը, 400-ի խորհրդի ստեղծումը և այլն)։ Առաջին սրբազան պատերազմը տեղի է ունեցել մ.թ.ա. 595-583 թթ. Հին Հունաստանի կենտրոնում գտնվող Կիրոս նավանգստային քաղաքի և Դելֆյան տաճարի միջև (վերջինիս պաշտպանում էր Աթենքը՝ Սոլոնի գլխավորությամբ)՝ տաճար եկող հավատացյալներից տուրք գանձելու Կիրոսի մտադրության պատճառով, որը համարվում էր սրբավայրեր եկող քաղաքացիների սրբազան իրավունքի ոտնահարում։ Պատերազմն ավարտվել է Դելֆյան տաճարի և Աթենական պետության հաղթանակով։

րիկլեսի ժամանակներից սկսած՝ պետական միջոցները դիտվել են որպես համաժողովրդական, այն իմաստով, որ հասարակության բոլոր անդամներն այնտեղ ունեն իրենց ուժերի ներածի չափով ներդրում, ուստի այդ տրամաբանությամբ էլ պետության կողմից արվող ծախսերի շատ տեսակներ համարվել են պարզապես ժողովրդական միջոցների վերադարձում ժողովրդին: Արիստոտելը վկայում է, որ Պերիկլեսը նույնիսկ դատավորներին վճարվող աշխատավարձը դիտում էր որպես ժողովրդին՝ իր իսկ միջոցների վերադարձում արդարադատության ծառայությունների մատուցման միջոցով:

Գրիշինը նշում է նաև, որ դեռևս մինչև Պերիկլեսը գոյություն է ունեցել պետական միջոցների որոշակի մասը քաղաքացիներին վերադարձնելու ավանդույթ, և որպես նման ավանդույթի ցայտուն օրինակ է բերում մ.թ.ա. 484-483 թթ. պետական գանձարանից քաղաքացիներին 100 տաղանդ<sup>16</sup> (մոտ 2.6 տոննա) արծաթի չափով դրամական միջոցների պարբերական բաժանումները, որոնք արվում էին այդ տարիներին Լավրյան հանքերից արծաթի արդյունահանումից ստացվող միջոցներից:

Պետական միջոցների վերաբաշխման՝ Պերիկլեսի կառավարման օրոք ձևավորված համակարգի մասին 19-րդ դարի վերջում իր կարծիքն էր հայտնում բրիտանացի գիտնական Վ. Լյոյդը՝ նշելով, որ զոհաբերությունների, սրբազան արարողությունների, ներկայացումների ժամանակ միջոցների բաժանման ավանդույթը, որն իբրև թե իրականացվում էր աստվածների կամքով և ուներ միստիկ իմաստ, նույնպես տեղավորվում էր սոցիալական օգնության ավանդույթային համակարգի մեջ:

Գրիշինի կարծիքով՝ Աթենական պետության սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումների, այդ թվում՝ պետական սոցիալական օգնության ավանդույթի վրա զգալի ազդեցություն թողեցին նաև հույն-պարսկական պատերազմները, որոնց ընթացքում Ատտիկայի մեծ թվով բնակիչներ կորցրին իրենց ունեցվածքն ու ապրուստի միջոցները: Նա նշում է, որ Արիստոտելն իր «Աթենական քաղաքականություն» աշխատության մեջ հիշատակում է Արիստիդին<sup>17</sup>, որը Ատտիկայի ունեզրկված բնակիչներին խորհուրդ էր տալիս ապրուստի միջոցներ և աշխատանք հայթայթելու համար գյուղերից գնալ Աթենք: Այդ խորհրդով Ատտիկայի՝ պատերազմից տուժած վայրերից Աթենք եկած ունեզրկված քաղաքացիներին՝ որոշակի ծառայությունների մեջ ներգրավելու (մի մասին մարտական գործողություններին մասնակցելու, մի մասին՝ կայազորային ծառայություններ կատարելու, երրորդներին՝ հասարակական պարտականություններ կատարելու և այլն) պայմանով երաշխավորվում էր սննդի տրա-

16 **Տաղանդ** (հին հուն․՝ *τάλαντον*՝ կշեռք բառից լատ․՝ *talentum*), ծանրության չափ և դրամական միավոր Հին Հունաստանում, Բաբելոնում, Պարսկաստանում, Հյուսիսային Աֆրիկայում և այլն, որը հիմնականում օգտագործվում էր թանկարժեք մետաղների չափման համար: Հին աշխարհի տարբեր երկրներում տաղանդի կշիռը տարբեր էր. օրինակ, Հռոմեական կայսրությունում մեկ տաղանդը կշռով հավասար էր մեկ խորանարդ հռոմեական ոտնաչափի ծավալով կամ 26.027 լիտր տարողություն ունեցող սափորում տեղավորվող ջրի քաշին, եգիպտական տաղանդը հավասար էր 27 կգ-ի, բաբելոնյան տաղանդը՝ 30.3 կգ-ի և այլն:

17 **Արիստիդ** (մ.թ.ա. մոտ 530-467 թթ.): Հույն-պարսկական պատերազմների շրջանի աթենական պետական գործիչ, զորավար, ժողովրդավարական բարեփոխումների կողմնակից, ով Աթենքի քաղաքացիների շրջանում լայն ժողովրդականություն էր վայելում՝ շնորհիվ իր արդարամտության և պետական շահերը անձնականից և խմբայինից վեր դասելու կարողության:

մադրումը<sup>18</sup>: Արիստոի կարծիքով՝ հենց այսպիսի միջոցներով պետությունը կշարունակեր իր ձեռքում պահել հեգեմոնի դերը:

Գրիշինը նշում է նաև, որ ըստ հույն հեղինակների՝ վերը նշված պատերազմների հետևանքով Աթենքում անապահով քաղաքացիների տեսակարար կշռի մեծացումն էր, որը իշխանություններին ստիպում էր մտածել քաղաքացիների սոցիալական ապահովության մասին: Մասնավորապես Արիստոտելը կարծում էր, որ աղքատների թվի ավելացումն ուղղակիորեն ազդում է Աթենական պետության քաղաքական կյանքի վրա այն իմաստով, որ աղքատների տեսակարար կշռի ավելացումով ավելանում է նաև ոչ ունևոր խավերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը՝ իշխանական համակարգի տարբեր մակարդակների մարմիններում՝ Ժողովրդական ժողովում, Գելիաներում, Բուլերում, Մագիստրատուրաներում: Մ.թ.ա. 480–479 թթ. հույն–պարսկական պատերազմներից հետո ընկած 17 տարիների ընթացքում աղքատության առավել տարածման հետևանքով մեծացավ Ժողովրդի ազդեցությունը Աթենական պետության կառավարման գործում, որը դրսևորվեց Արեոպագոսի արիստոկրատական կառավարման նկատմամբ Ժողովրդական ընդդիմադիր ուժի<sup>19</sup> ձևավորման տեսքով: Հետագայում, ըստ Գրիշինի, սոցիալական քաղաքականության՝ որպես ավանդույթի, գաղափարն աստիճանաբար մոռացվեց:

### 3. Օգնության քրիստոնեական պարադիգման

Միջնադարում անտիկ շրջանի ֆիլանտրոպիային փոխարինելու է գալիս օգնության քրիստոնեական հայեցակարգի հիմքում ընկած մերձավորի նկատմամբ գործնական սիրո՝ «ագապե»-ի (լատիներն բառացի՝ սեր մերձավորի նկատմամբ) փիլիսոփայությունը<sup>20</sup>: Օգնության քրիստոնեական հայեցակարգի ենթատեքստում օգնությունը հիմնվում է ոչ այնքան օրենքի և քաղաքացիական ավանդույթներից եկող պահանջների, որքան սրտի թելադրանքի, ուրիշ մարդու ճակատագրում, նրա կարիքների ու խնդիրների լուծման գործում մասնակցություն ունենալու զգացմունքի վրա: Ներխմբային օգնությունն ու փոխօգնությունը փոխադրվում է լայն հասարակություն, կանոնակարգվում է և իսկական քրիստոնյաի համար դառնում է կյանքի պարտադիր օրենք: «Ագապե» հասկացության բովանդակությունը հարստացվում է նաև «գթասրտություն», «խնամք», «հոգածություն» իմաստներով: Օգնության և գթասրտության մասին քրիստոնեական կարևորագույն դոգմաների իմաստավորման միջոցով տեղի է ունենում օգնության եկեղեցական տեսական դոգմաների ձևավորում և զարգացում (Գրիգորիս Աստվածափառ, Հովհան Ոսկերեբան, Եփրեմ Սիրիացի, Ֆեոդոր Ստուդիտ, Հովհան Դամասկոսցի, Աթանաս Ալեքսանդրացի և ուրիշներ): Անզորությունը, դժբախտությունը դառնում են այն միա-

18 Այս միջոցառումները հիշեցնում են զբաղվածության ոլորտում հասարակական աշխատանքների ժամանակակից ծրագրերը, մասնավորապես՝ 1990-ական թթ. բավականաչափ լայն տարածում ստացած «Մունդ» աշխատանքի դիմաց» ծրագիրը:

19 Ժողովրդական այս ուժը ընդունված է համարել պատմության մեջ ձևավորված առաջին կազմակերպված ընդդիմությունը:

20 Տե՛ս **Выршиков А. Н.** и др., Теория социальной работы (учебно-методическое пособие), часть 1., Волгоград-1999, с. 21.

վորող պարադիգմները (հիմնագաղափարները), որոնց հիման վրա էլ հասունանում է հիվանդի, խեղվածի և առողջ մարդու միջև հավասարակշռության, այսինքն՝ Աստծո առաջ դրանց բոլորի հավասար լինելու զգացումը:

Գրիգորիս Աստվածափառի կարծիքով, օրինակ, ողորմություն տալը դառնում է մարդկանց անհատական միասնականացման նոր ձև, որի միջոցով է միայն հնարավոր մարդու բարձրացումը դեպի իր էությունն ու դրա միջոցով էլ աստվածային տարբերանշանների ի հայտ գալուն հասնելը: Այս մոտեցմանը հարող Հովհան Ոսկեբերանը տարբերակում էր օգնության երկու տեսակ՝ հոգևոր և մարմնական ողորմածություն<sup>21</sup>:

**Երկրորդ հազարամյակի նախօրյակին Եվրոպական երկրների սոցիալական զարգացման գաղափարախոսությունը հիմնականում ձևավորվեց սոցիալական կազմակերպության երկու հիմնական տիպերի՝ պետության և եկեղեցու ազդեցությամբ ու հովանու տակ:**

Այդ ժամանակահատվածում եկեղեցին դարձավ սոցիալական միջոցառումներ իրականացնող կարևորագույն սուբյեկտներից մեկը: Բարեգթությունը կենտրոնական սկզբունք և փրկության բանալի հայտարարած քրիստոնեական եկեղեցին հիերարխիկ ամենաբարձր մակարդակով (բարձրագույն եկեղեցական խորհուրդներ, սինոդներ, արքեպիսկոպոսություններ) իր վրա էր վերցրել առաջին և երկրորդ հազարամյակների սահմանագլխին Եվրոպայի շատ երկրներում լայն տարածում ստացած աղքատության հետ կապված խնդիրների լուծումը: Այդ առումով անգլիացի հետազոտող Մ. Սիլեսը վկայաբերում է Ռեյմսի արքեպիսկոպոս Հինկմարի կողմից 858 թ. ընդունած սոցիալական ծրագիրը, որում որպես արքեպիսկոպոսի գլխավոր պարտականություն էր սահմանված «աղքատների կամ այլ հյուրերի ընդունելը և ընդհանրապես դռները միշտ բաց պահելը»<sup>22</sup>:

Օգնության քրիստոնեական հայեցակարգի զարգացման հետ սկսեց նաև ինստիտուցիոնալացվել քրիստոնեական եկեղեցու կողմից մարդկանց ցուցաբերվող օգնության գործընթացը: Ինչպես նշում է Ա. Ասրյանը, քրիստոնեական գաղափարաբանության դեռևս առաքելական շրջանում գրված մի շարք սկզբնաղբյուրներում («Նոր կտակարան», «Գործք առաքելոց» և այլն) արդեն հիշատակություններ կան քրիստոնեական եկեղեցու կողմից սոցիալական օգնության ցուցաբերման նախնական ինստիտուտի՝ **սոցիալական դիակոնիայի** ձևավորման մասին: «Դիակոնիայի հիմնական խնդիրն էր ստեղծել քրիստոնեական համայնք՝ հոգ տանելով բոլոր նրանց մասին, ովքեր կարեկցանքի կարիք ունեն: Քրիստոնեական առաջին համայնքներում սերը և գթասարտությունը դեպի մերձավորն ու կարոտյալը անբաժան էին բուն կրոնական էությունից: Առաքյալները հոգ էին տանում համայնքի անդամների բոլոր կարիքների համար՝ սննդի ձեռք բերում, զոհաբերություններից ստացված եկամուտների գանձում, բաշխում ու բազում այլ աշխատանքներ: Սակայն առաքյալների այս պարտականությունների կատարումով վտանգվում էր նրանց բուն առաքելությունը, այն է՝ քարոզել Քրիստոսի Ավետարանը աշխարհով մեկ և

21 Տե՛ս նույն տեղում:

22 Смирнов С. Н., Сидорина Т. Ю. Социальная политика, М., 2004, с. 113.

ստեղծել քրիստոնեական նոր համայնքներ: Ուստի քրիստոնեական համայնքի զարգացմանը զուգահեռ առաջացավ նոր ծառայողների, սպասավորների անհրաժեշտություն, որոնք էլ դարձան դիակոնները՝ սարկավագները»<sup>23</sup>: Հենց սարկավագները, ովքեր ընտրվում էին համայնքի կողմից իրենց բարի համբավի, բարեպաշտության ու կրթվածության համար (այսօրվա ընկալումով որպես առաջին սոցիալական աշխատողներ), կոչված էին աջակցելու համայնքի բոլոր կարիքավոր անդամներին ինչպես խորհրդատվությամբ, այնպես էլ նրանց կենսական կարիքների բավարարման համար անհրաժեշտ նվազագույն նյութական բարիքների ապահովմամբ: Սարկավագների դասը եկեղեցու սոցիալական դիակոնիայի առաջին՝ պարզագույն դրսևորումն էր: Այդ ինստիտուտի հետագա զարգացման արդյունքում ստեղծվեցին օգնության ցուցաբերման ավելի բարդ կառուցվածք ունեցող հաստատություններ՝ վերջնականապես ձևավորելով քրիստոնեական եկեղեցու կողմից իրականացվող սոցիալական աշխատանքի՝ դիակոնիայի համակարգը, որը կոչված էր օգնելու մարդուն՝ վերջինիս հոգևոր, ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական կարիքները հոգալու գործում:

Կոստանդնուպոլիսում, օրինակ, հարուստ քրիստոնյաների կողմից ստեղծվում էին քսենոդոխիաներ (օտարականների օթևաններ), նոսոկոմիաներ (բուժարաններ, հիվանդանոցներ), հերոնոկոմիաներ (ծերանոցներ) և այլն<sup>24</sup>:

**Հայաստանում** ևս քրիստոնեության տարածման սկզբնական շրջանից սկսած՝ մարդասիրական և բարեգործական նկատառումներով ստեղծվեցին վանական բազմաթիվ բարեգործական հաստատություններ՝ հիվանդանոցներ, որբանոցներ ու ծերանոցներ, օթևաններ, որտեղ ոչ միայն խնամում էին կարոտյալներին ու լքվածներին, այլև պատրաստում էին հիվանդապահներ ու խնամատարներ, այսինքն՝ այսօրվա ընկալումով՝ կրոսեր սոցիալական ծառայողներ:

Հայ եկեղեցու պատմության մեջ դեռևս չորրորդ դարում Ներսես մեծ կաթողիկոսի կողմից հասարակության լքված ու կարոտյալ խավերի համար հիմնվեցին բազմաթիվ բարեգործական հաստատություններ՝ ծերանոցներ, հիվանդանոցներ, անկեղանոցներ, ճաշարաններ, օթևանատներ՝ սկիզբ դնելով Հայ առաքելական եկեղեցու դիակոնիայի համակարգին, որը տարբեր ձևափոխություններով գործում է մինչև մեր օրերը:

Ըստ Ա. Ասրյանի՝ «Եթե եկեղեցին կրոնական և բարոյական քարոզչությանը իր հավատացյալների հայացքը դեպի երկնայինն ու վսեմն էր ուղղում, ապա գթության և սիրո գաղափարներով, նա՝ դիակոնը, հավատացյալներին կապում է շրջապատի և աշխարհի հետ (ժամանակակից ընկալումով՝ ինտեգրում էր հասարակությանը – Վ. Գ.): Հենց այս կերպ եկեղեցին իրականացնում է կրոնի սոցիալական գործառնությունը»<sup>25</sup>:

23 Ասրյան Ա., Սոցիալական դիակոնիա. Հայ առաքելական եկեղեցու սոցիալական աշխատանքը և արտասահմանյան փորձի կիրառումը Հայաստանում:

24 Տե՛ս **Выршиков А.Н.** и др., Теория социальной работы (учебно-методическое пособие), часть 1., Волгоград, 1999, с. 21:

25 Ասրյան Ա., Սոցիալական դիակոնիա. Հայ առաքելական եկեղեցու սոցիալական աշխատանքը և արտասահմանյան փորձի կիրառումը Հայաստանում, /[http://www.regions.am/index.php?option=com\\_content&view=article&id=13:astghik-diakonia&catid=1:2009-02-27-03-45-54/](http://www.regions.am/index.php?option=com_content&view=article&id=13:astghik-diakonia&catid=1:2009-02-27-03-45-54/)



Եկեղեցին սոցիալական օգնությունն օրինականացրեց որպես իր գործունեության ուղղություններից մեկը՝ աստիճանաբար ինստիտուցիոնալացնելով ու բարդացնելով բարեգործական գործունեությունը, որի արդյունքում վանքային համալիրները վերածվեցին բազմապիսի օգնությունների ցուցաբերման կենտրոնների, որտեղ վանականներն սկսեցին կատարել նաև օգնության կարիք ունեցող անձանց առաջին դասակարգումները՝ հիվանդներ, մուրացկաններ, ճանապարհորդներ և այլն: Եկեղեցին միաժամանակ օգնության ենթակա անձանց տարբերակված մոտեցում էր ցուցաբերում նաև ոչ միայն ըստ նրանց կարիքի, այլև ըստ նրանց սոցիալական կարգավիճակի (դասային պատկանելության): Եվրոպական երկրներում հետագայում (950 թ.) այդ տարբերակումն ավելի խորացվեց, ինչի արդյունքում հարուստ և աղքատ կարիքավորներին սպասարկում էին տարբեր ծառայողներ: Այսպիսի մոտեցումը վկայում էր այն մասին, որ սոցիալական օգնության գործընթացն արդեն դուրս էր եկել զուտ քրիստոնեական գթասրտությամբ ղեկավարվող գործունեության շրջանակներից և հիշեցնում էր սոցիալ-քաղաքական ուղղվածություն ունեցող կազմակերպված գործունեություն, որը հիմք է տալիս խոսել ոչ միայն ինստիտուցիոնալիզացված, այլև որոշակի դասակարգային ուղղվածություն ունեցող սոցիալական քաղաքականության ձևավորման մասին, իսկ եկեղեցին էլ դիտել որպես որոշակի սոցիալական քաղաքականություն վարող հաստատություն:

Այդ ժամանակաշրջանում եկեղեցու իշխանության ու ազդեցության մեծացման մասին է վկայում եկեղեցական համակարգի կողմից նաև երեխաների կրթության ու դաստիարակության ապահովման գործառնությունների սեփականացումը, ինչպես նաև աղքատներին օթևանի և սննդի ապահովումը: Դրանով իսկ՝ այսօրվա ընկալումներով ասած՝ սոցիալական պաշտպանության հիմնական ոլորտները՝ կրթությունը, առողջապահությունը և աղքատների սոցիալական ապահովությունը կենտրոնացվեցին մեկ տեղում՝ եկեղեցու ձեռքում: Եթե դրան ավելացնում ենք նաև այն, որ եկեղեցու վարույթում էր գտնվում նաև սոցիալական վեճերի լուծման խնդիրը, ապա ստացվում է, որ ի դեմս եկեղեցու, գործ ունենք պետական կառավարման լուրջ լծակներ ունեցող, ինչպես նաև ունիվերսալ գործառնություններ իրականացնող սոցիալ-քաղաքական ինստիտուտի հետ:

**Ըստ էության, եկեղեցին այդ ժամանակներում «մեկ տանիքի» տակ էր հավաքել կարիքավոր անձանց սոցիալական օգնության տրամադրման գրեթե բոլոր ձևերը (պայմանականորեն հանդիսանալով համալիր սոցիալական ծառայությունների ժամանակակից մոդելի նախատիպը)՝ դրանով իսկ դառնալով իր ժամանակի սոցիալական քաղաքականության ամենաազդեցիկ սուբյեկտը:**

Օգնության քրիստոնեական համակարգը հետաքրքիր դրսևորումներ ունեցավ նաև ռուսական իրականության մեջ: Ռուսական պետության ստեղծումից ի վեր եկեղեցական օգնությունն իրականացվում էր երկու հիմնական ձևերով՝ վանական և ծխահամայնքային<sup>26</sup>:

Օգնության վանական ձևը ինքնապաշտպանության բազմագործառնությո

26 Տե՛ս **Выршиков А. Н.** и др., Теория социальной работы (учебно-методическое пособие), часть 1., Волгоград, 1999, с. 25-26:

համակարգ էր, որտեղ ձևավորվում էր մարդու ինքնօգնության հատուկ տիպ՝ կապված նրա կյանքի հիմնական կարևոր ոլորտների՝ հաղորդակցության, ուսուցման, համակեցության ապահովման, բուժման, տնտեսության վարման հետ: Վանքերը, ստանալով իշխանների աջակցությունը, դառնում էին բարեգործական և ընդհանրապես «սոցիալական գործունեության» կենտրոններ, որտեղ իրականացվում էին սոցիալական պաշտպանության երեք հիմնական գործառույթները՝ բուժում, չքավորների ապահովում (միանվագ ողորմածությունների ձևով) և ուսուցում:

Օգնության ծխահամայնքային (приходская) համակարգի զարգացման վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ շրջանառվում է երկու հիմնական տեսակետ, որոնցից **առաջինի** կողմնակիցները ծխահամայնքի առաջացումը կապում են մոնղոլ-թաթարական արշավանքների հետ, որոնց հետևանքով բնակչությունը հարավային հողերից գաղթում էր դեպի հյուսիսի ավելի խիստ բնակլիմայական պայմաններ ունեցող դժվարամատչելի վայրերը՝ հիմնելով այնտեղ եկեղեցի, իսկ վերջինիս շուրջը նաև բնակավայր: Ձևավորվում էր նոր տիպի բնակավայր, որտեղ եկեղեցին համատեղում էր հոգևոր և վարչական կառավարման գործառույթները: Ծխական համայնքը, հոգևոր և վարչական գործառույթներից գատ, կատարում էր նաև այն հիվանդների, անգորների, հաշմանդամների, որբերի ու աղքատների համայնքային սոցիալական պաշտպանության ինստիտուտի գործառույթներ, ովքեր, չլինելով հին բնակավայրում ապրող համայնքի բնակիչներ, սակայն ճանապարհին միանալով այդ բնակավայրից գաղթածներին, նրանց հետ ապաստան էին գտել նոր բնակավայրում:

**Երկրորդ** տեսակետի կողմնակիցները ծխահամայնքային բարեգործությունը համարում էին անցումային օղակ սոցիալական օգնության եկեղեցական և քաղաքացիական համակարգերի միջև: Ծխահամայնքային օգնության համակարգերը, ի տարբերություն եկեղեցական օգնության փակ համակարգերի, բաց են այն առումով, որ այդպիսի համայնքներն ինքնուրույն են ընտրում ինչպես համայնքի ղեկավարին ու ավագանուն, այնպես էլ քահանային: Ծխական համայնքը միաժամանակ հանդիսանում էր վարչատարածքային, զենսովոյական միավոր, որում կենտրոնացվում էին համայնքային կյանքի ինչպես հոգևոր, այնպես էլ քաղաքացիական կողմերի կարգավորման գործառույթները: Ծխական համայնքները՝ որպես կոլեկտիվ օգնության ինստիտուտներ, տարբեր ուղղություններով օգնություն էին ցուցաբերում համայնքի բոլոր անդամներին՝ նյութական օգնությունից մինչև հոգևոր և աշխարհիկ գրագիտության հիմունքների ուսուցում՝ ծխական դպրոցների միջոցով:

Ըստ ժամանակակից ռուս հետազոտող և եկեղեցական բարեգործության ճանաչված տեսաբան Յա. Կրոտովի<sup>27</sup> բարեգործությունն ի սկզբանե

27 **Յակով Կրոտովը** մի շարք օրինակներ է բերում, որոնք վկայում են միջնադարյան Եվրոպայում սոցիալական օգնության ոչ եկեղեցական համակարգերի զարգացածության մասին: Մասնավորապես Եվրոպայում սոցիալական օգնության ոչ կրոնական առաջին կազմակերպություններն ստեղծվեցին 11-րդ դարում արհեստագործական համքարությունների կողմից, որոնց կանոնադրություններում նույնիսկ գրվում էր, որ համքարության անդամները պետք է օգնեն իրենց հիվանդ, անաշխատունակ և դժբախտության և աղքատության մեջ հայտնված եղբայրներին: 1084 թ. Անգլիայում հիմնվեց աղքատների ու հաշմանդամների հոգածության պետական հաստատությունների ցանցը: 12-րդ դարում Եվրոպայի բնակչության գրեթե 1/3-ի կյանքը խլած ժամտախտի հետևանքները վերացնելու, պակասած աշխատուժը որոշակիորեն լրացնելու նպատակով հին աշխարհամասի պետությունների մեծ մասում ընդունվեցին

եղել է եկեղեցական հաստատությունների սկզբունքային գործառույթներից մեկը: Եվ բավականաչափ երկար ժամանակ պահանջվեց, որ այդ սկզբունքը որպես պարտադիր գործառույթ որդեգրվեր պետական իշխանությունների կողմից:

Սոցիալական օգնության եկեղեցական համակարգերի տիրապետությամբ հանդերձ, միջնադարյան Եվրոպայում որոշակիորեն առկա էին նաև բնակչության սոցիալական օգնության ոչ եկեղեցական, այդ թվում՝ պետական համակարգեր, որոնք, սակայն, գլխավորապես ղեկավարվում էին օգտապաշտական նկատառումներով: Օրինակ՝ ֆեոդալը պարտավոր էր հոգ տանել իր ձորտերի ու ծառաների նկատմամբ: Այդպիսով նա կարող էր իրեն տնտեսապես ապահով զգալ, քանի որ կարողանում էր կերակրել, հագցնել ու պատսպարել իրենից կախում ունեցող մարդկանց, իսկ ձորտերը, որպես կանոն, ֆեոդալից սնունդ, հագուստ ու օթևան էին ստանում այնքան ժամանակ, քանի դեռ ի վիճակի էին աշխատել նրա համար, իսկ անաշխատունակներին օգնում էին նրանց ընտանիքները, առանձին մարդիկ կամ եկեղեցական կառույցները:

Սա չէր վերաբերում ֆեոդալի կամ թագավորի մոտ ծառայող զինվորականներին, որոնք, ի տարբերություն գյուղացիների ու ձորտերի, վիրավորվելու, խեղման կամ ծերության դեպքում ստանում էին որոշակի փոխհատուցումներ և նույնիսկ կենսաթոշակներ՝ կապված իրենց ծառայության տարիների և զինվորական հիերարխիայում զբաղեցրած դիրքի հետ: Նմանատիպ մոտեցումը դարեր շարունակ տիրապետող է եղել նաև Հռոմեական կայսրությունում, Մասանյան Պարսկաստանում, Չինական Թան կայսրությունում: Զինվորականների ու հատուկ պետական ծառայողների սոցիալական պաշտպանության հարցերը, որոնցում գերակշռում էին, այսօրվա ընկալումներով՝ ապահովագրական հիմքերով ցուցաբերվող սոցիալ-պաշտպանական գործառույթները, առանձին քննարկման առարկա են:

Ինչ վերաբերում է սոցիալական օգնության պետական համակարգերին, ապա եվրոպական երկրներում դրանց զարգացման հայեցակարգերի ձևավորման վրա էական ազդեցություն ունեցավ առաջին և երկրորդ հազարամյակների սահմանագլխին հին աշխարհամասում մի քանի կայուն թագավորությունների ձևավորումը, որոնք իրենց վրա վերցրին աղքատների բուժման և սննդապահովման խնդիրների լուծումը, իսկ կանանց և տղամարդկանց, այսօրվա ընկալումներին համապատասխան, քաղաքացիական իրավունքների կարգավորումն (օրինակ, գույքային և ընտանեկան վեճերի լուծումը) անցավ տեղական դատարաններին:

աշխատունակ բոլոր մարդկանց պարտադիր աշխատելուն ուղղված օրենքներ, որոնցով արգելվում էր աշխատունակ աղքատներին ողորմություն տալը: 1384-ին Անգլիայում աղքատները օրենսդրական մակարդակում դասակարգվեցին երկու խմբի՝ «արժանի աղքատներ» (ծերեր, հաշմանդամներ, այրի կանայք, որբեր) և «անարժան աղքատներ» (աշխատունակ չաշխատողներ): Այդ նույն օրենքն արգելում էր օգնություն ցուցաբերել երկրորդ խմբի աղքատներին: 1510 թ. Իսպանիայում ստեղծվեց աղքատների հաշվառման աշխարհում առաջին համակարգը: 16-րդ դարում Արևմտյան Եվրոպայում ստեղծվեցին նույն գործունեությամբ զբաղվող անձանց միավորող «եղբայրություններ», որոնք ստեղծեցին սոցիալական փոխօգնության և ապահովագրության բավականին արդյունավետ մեխանիզմներ: Այդ եղբայրությունները ժամանակակից արհմիությունների նախատիպերն էին, որոնք լայն տարածում ստացան արդյունաբերական հեղափոխության դարաշրջանում: 19-րդ դարավերջում Անգլիայի յուրաքանչյուր իններորդ քնակիչ հանդիսանում էր նմանատիպ եղբայրության անդամ: Տե՛ս Кротов Яков, Социальная помощь, [http://krotov.info/spravki/temy/p/pomosch\\_soz.html](http://krotov.info/spravki/temy/p/pomosch_soz.html):

Երկրորդ հազարամյակի սկզբում (11-12-րդ դարերում) գյուղատնտեսության աճը, հակառակ սպասումներին, չհանգեցրեց Եվրոպայում մոտ 150 տարի մոլեգնող սովի ու աղքատության վերացմանը: Աղքատությունը շարունակում էր աճել, չնայած եկեղեցին ու պետությունները աղքատներին օգնություն էին ցուցաբերում այն ժամանակների կենսաստանդարտների համապատասխան:

Նույնիսկ այդ դարերի իրողությունները ցույց տվեցին, որ աղքատությունը շատ ավելի բարդ ու բազմաչափ սոցիալական երևույթ է և չի կարող հաղթահարվել միայն հարաբերական տնտեսական աճի միջոցով: Բացի այդ՝ բազմակողմ և համակարգված սոցիալ-քաղաքական միջոցառումների բացակայությունը կարող է հանգեցնել նույնիսկ սոցիալական անհավասարության խորացմանը, ինչպես դա դիտվեց 1990-ական թվականների վերջից մինչև 2007 թ. **Հայաստանում** գրանցված երկնիշ տնտեսական աճի պայմաններում: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Հայաստանին վերաբերող «Մարդկային զարգացման 2009 թ. ազգային զեկույցում» նշվում է, որ Հայաստանում 1994 թվականից սկիզբ առած և շարունակվող տնտեսական աճը ուղիղ համեմատականորեն չէր ազդում երկրում աղքատության ու անհավասարության երևույթների վրա: Հայաստանում 2004 թ. 1999 թ. համեմատ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալի գրեթե կրկնակի աճի պայմաններում, բնակչության ամենաաղքատ և ամենահարուստ 20%-ների եկամուտների տարբերությունը 3.6 անգամից հասել էր 10.6 անգամի, իսկ 2006-ին 1999-ի համեմատ գրեթե 3.2 անգամ աճած ՀՆԱ-ի պայմաններում անհավասարության վերը նշված ցուցանիշը կազմել էր 7.6<sup>28</sup>:

#### 4. Ազատականության փիլիսոփայությունը և օգնության պետական պարադիգմայի ձևավորումը

17-րդ դարում եկեղեցին վերջնականապես կորցրեց միակ կամ գլխավոր բարեգործի իր դիրքերը: Արևմտյան Եվրոպան վերադարձավ Պլատոնի և Արիստոտելի այն գաղափարներին, որոնց համաձայն՝ քաղաքացիական հասարակությունն է իր վրա վերցնում բոլոր կարիքավորներին օգնելու պարտականությունը: Չնայած դրան, եկեղեցաքրիստոնեական բարեգործությունը՝ որպես սոցիալական օգնության ինստիտուտ, շարունակում է իր գոյությունն առ այսօր:

Սոցիալական օգնության հիմքում ընկած բարեգործությունը՝ որպես սոցիալական երևույթ, ամենից առաջ բնութագրվում է որպես սեփական կենսագործունեությունը թեկուզև նվազագույն մակարդակում օրյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ինքնուրույնաբար ապահովելու հնարավորություն չունեցող մարդկանց նկատմամբ նպատակադիր վերաբերմունք: Պատմական զարգացման ընթացքում բարեգործությունը ձեռք բերեց տարբեր ձևեր՝ ողորմություն, հասարակական հոգածություն, հոգաբարձություն:

**Ողորմությունը** ձեռքը մեկնած կարիքավոր մարդկանց փող կամ այլ

28 Տե՛ս ՄԱԶԾ-Հայաստան, Մարդկային զարգացման ազգային զեկույց-2009, «Միգրացիա և մարդկային զարգացում. հնարավորություններ և մարտահրավերներ», էջ 71:

նյութական միջոցներ տալն է, որ պայմանավորված է այդ միջոցները տվող մարդու սուբյեկտիվ աշխարհընկալումով, արժեքներով ու հնարավորություններով: Դա նշանակում է, որ այս դեպքում ողորմություն տվողների սուբյեկտիվ նախապատվությունների շնորհիվ որոշ սոցիալական խմբեր (որոնք ավելի ակտիվ են) ողորմության տեսքով կարող են ստանալ չափից ավելի օգնություն, իսկ որոշ խմբեր էլ կարող են ընդհանրապես դուրս մնալ նույն այդ ողորմություն տվողների մեծամասնության ուշադրությունից: Փորձը ցույց է տվել նաև, որ առատ ողորմությունը ծնում է պրոֆեսիոնալ չքավորություն:

**Հասարակական հոգածությունը** ողորմության համեմատ բարեգործության ավելի բարեկիրթ ձև է, որն իրականացվում է պետության, եկեղեցու, հասարակական խմբերի կամ մասնավոր անձանց կողմից, որն ամենից առաջ արտահայտվում է կարիքավորներին օթևանի և սննդի տրամադրման ձևերով: Հասարակական հոգածությունը (խնամքը) ողորմության տրամադրման նախնական ձևերից տարբերվում է նաև կազմակերպվածությամբ, դրդապատճառներով, նպատակներով, որոնց համապատասխան էլ օգնություն ստացողների համար ստեղծվում են պետական և ոչ պետական տարբեր կառույցներ (շուրջօրյա խնամքի հաստատություններ՝ ինտերնատներ, հիվանդանոցներ և այլն)՝ կախված շահառուների կարիքների բնույթից:

Հասարակական հոգածությունը տարածվում է այն մարդկանց վրա, ովքեր իրականում օգնության կարիք ունեն և իրենց կարիքավորությունը չեն դարձնում արհեստ՝ խթանելով վերջինիս խորացումը ու չարաշահելով մարդկային կարեկցանքը՝ դիտելով այն որպես սեփական գոյության միջոցների ստացման հիմնական աղբյուր: Բարեգործության այս ձևի դրդապատճառները քաղաքացիական համերաշխությունն ու կարիքավոր մարդու բարեկեցության նկատմամբ հոգածությունն են:

**Հոգաբարձության**՝ որպես բարեգործության ձևի, սկզբնական նպատակը իրականում կարիքավոր, սակայն ողորմություն չխնդրող մարդկանց բացահայտումն էր և հնարավորությունների սահմաններում նրանց կարիքներին համապատասխան օգնության ցուցաբերումը: Այն ուղղված էր անչափահաս և անգործունակ քաղաքացիների անձնական և գույքային իրավունքների ու շահերի պաշտպանությանը: Բարեգործության այս ձևը կիրառվում էր նաև համայնքի առավել հարգարժան անդամներից կազմված հոգաբարձուական խորհուրդների ձևավորման միջոցով, որոնք աջակցում էին այլ սոցիալական հաստատությունների գործունեությանը:

Արդյունաբերական հեղափոխության դարաշրջանում (17-րդ դարի 60-ական թվականներից սկսած) Մեծ Բրիտանիայում գրանցված տնտեսական աճի շնորհիվ դիտարկված բարեկեցության աճն իր հերթին հանգեցրեց ծնելիության կտրուկ աճի, ինչպես նաև մահացությունների նվազման, որոնց հետևանքով 1750-1799 թթ. Միացյալ Թագավորության բնակչության թիվը 6.4 միլիոնից հասավ 9 միլիոնի<sup>29</sup>: Այդ աճը, սակայն, իր հետ բերեց մի շարք բացասական սոցիալական հետևանքներ, մասնավորապես՝ հողագրկված և աղքատացած գյուղացիների դեպի արդյունաբերական քա-

29 Стів Смирнов С. Н., Сидорина Т. Ю., Социальная политика, М., 2004, с. 115.

ղաքներ զանգվածային միգրացիա, բանվորական աշխատուժի էժանացում, քաղաքային աղքատության խորացում, բանվորական շրջաններում դժգոհության և սոցիալական լարվածության մեծացում, որոնք սպառնում էին վերածվել լուրջ սոցիալական անկարգությունների: Հենց այդ սպառնալիքն էլ ստիպեց Բրիտանական պետությանը ավելի ու ավելի մեծ ուշադրություն դարձնել սոցիալական հիմնախնդիրներին: Աղքատների նկատմամբ հոգածությունը քրիստոնեական բարեգթության խնդրից աստիճանաբար վերածվեց պետության պարտադիր գործունեության ոլորտի:

18-րդ դարի վերջում Եվրոպական աշխարհամասի մեծ մասում ձևավորվեցին ազգային պետություններ: Մեծ տեմպերով ծավալվող արդյունաբերական հեղափոխության և Ֆրանսիական Մեծ հեղափոխության հետևանքով Եվրոպայով մեկ արագորեն արմատավորվող ազգ-պետության գաղափարը (Ֆրանսիական հեղափոխությունը մարդկանց գիտակցության մեջ թագավորին հավատարմության գիտակցությունը փոխարինեցին ազգի, ժողովրդի հետ անհատական նույնականացման գիտակցությամբ) ակտիվացրին միջին խավի ձևավորումը, որն էլ դարձավ ներկայացուցչական կառավարման համակարգերի ձևավորման գլխավոր պահանջատերը:

Սոցիալական օգնության և ընդհանրապես սոցիալական քաղաքականության համակարգերի ձևավորման վրա մեծապես ազդեցին նաև լուսավորականության գաղափարները: Վերջինների ազդեցությամբ լուրջ փոփոխություններ կրեց նաև եվրոպական արդարադատության համակարգը: Դատական նիստերի ժամանակ ավելի հաճախ էր բարձրացվում մեղադրյալների իրավունքների պաշտպանության հարցը: Օրենքի ոլորտում դատական ընթացակարգային արդարադատությունը դարձավ առաջնային: Բուրժուական հեղափոխությունների գաղափարները ձևավորեցին քաղաքացիական ազատությունների ժամանակակից համակարգերի հիմքերը: Այսպիսով, 19-րդ դարի սկզբում, արդյունաբերական հասարակության ձևավորման հետ, եվրոպական երկրներում սաղմնավորվեցին նաև սոցիալական հիմնախնդիրների լուծմանն ուղղված հատուկ քաղաքականությունների ձևավորման նախադրյալները:

Աստիճանաբար, հենց բարեգործության՝ որպես համամարդկային արժեքների համակարգի հենքի վրա ձևավորվեց բնակչության սոցիալական պաշտպանության աշխարհիկ համակարգը, որի տեսական ամբողջականացման առաջին դրսևորումը դարձավ **օգնության պետական պարադիգմը**: Եկեղեցական բարեգործությունից պետական սոցիալական օգնության համակարգին անցումը թելադրված էր.

- պրոֆեսիոնալ չքավորության դրդող ողորմության բաժանման միջնադարյան անվերահսկելի համակարգի փլուզմամբ,
- հասարակության սոցիալական կազմակերպության բարդացմամբ,
- բնատնտեսությունից դրամական տնտեսության անցումով և այլն, որոնք պահանջում էին պետության կողմից օգնության ավելի կազմակերպված համակարգերի ստեղծում:

19-րդ դարում **ազատականության՝ որպես սոցիալ-քաղաքական աշխարհայացքի, հիմնական դրույթը կապված էր անձի նկատմամբ**

**պետության բարոյական պարտքի և պատասխանատվության հարցի հետ:** Աստիճանաբար համընդհանուր ընդունելությունն գտավ հետևյալ մոտեցումը. **քանի որ պետությունը չի կարողանում ապահովել անձի նորմալ գոյության համար բոլոր պայմանները, ուստի այն բնականորեն պետք է սահմանափակի նաև անձի վրա իր ամբողջատիրական ազդեցության իրավունքը և հանդես չգա որպես անձի սոցիալական ապահովության/օգնության համար պատասխանատու միակ սուբյեկտ:** Այս առումով գլխավոր տեսական հարցերը կապված էին սոցիալական օգնության սուբյեկտի որոշման հետ, որի վերաբերյալ էլ այդ ժամանակ ձևավորվել էին երկու հիմնական մոտեցումներ, մասնավորապես՝

– պետությունն անմիջականորեն չի հանդիսանում կարիքավորներին ուղղակի պաշտպանող սուբյեկտ, այն կարող է միայն կազմակերպել բարեգործությունը (Լերուա-Քոլյե<sup>30</sup>, Թիերի<sup>31</sup>, Չալմերս<sup>32</sup>),

– պետությունը պետք է ուղղակիորեն օգնի կարիքավորներին (Մոլ, Բարոն, Լուի Բլան<sup>33</sup>):

Օգնության պետական պարադիգմայի զարգացումը պահանջում էր օգնության գործընթացների կազմակերպման նկատմամբ գիտական մոտեցման ցուցաբերում: Աստիճանաբար ձևավորվում էր այն պատկերացումը, որ օգնություն պետք է ցանկացած մարդու և այն պետք է ցուցաբերվի մասնագիտորեն: Ռուսական իրականության մեջ, օրինակ, առաջին անգամ Վ. Ի. Գիրեյի կողմից բարձրացվեց հասարակական բարեգործության տեսության՝ որպես օգնության գործընթացի վերաբերյալ ինքնուրույն հայացքների ամբողջության մասին հարցը<sup>34</sup>, որը ենթադրում էր սոցիալական օգնության համակարգերի նպատակների, խնդիրների, օբյեկտների, սուբյեկտների ընտրության, օգնության տրամադրման չափանիշների, ձևերի, եղանակների վերաբերյալ տեսական հայեցակարգերի ձևավորում: Առաջին այդպիսի հայեցակարգերը ձևավորվեցին 19-րդ դարի 2-րդ կեսում և 20-րդ դարում, որոնց հրատապությունն ու գիտական հիմնավորվածությունը պայմանավորված էին հետևյալ իրողություններով:

Ինտենսիվ ուրբանիզացիան, գյուղերից դեպի քաղաք ինտենսիվ միգ-

30 **Պլեո Պոլ Լերուա- Բոյե** (1843-1916), ֆրանսիացի տնտեսագետ, Սանկտ Պետերբուրգի կայսերական ակադեմիայի անդամ:

31 **Մարի Ժոզեֆ Լուի Ադոլֆ Թիերի** (1797-1877), ֆրանսիական քաղաքական գործիչ և պատմաբան, մի քանի անգամ դարձել է Ֆրանսիայի վարչապետ, Ֆրանսիական 3-րդ հանրապետության առաջին նախագահ՝ 1871-1873 թթ., Ֆրանսիական Մեծ հեղափոխության մասին կապիտալ աշխատությունների հեղինակ, Ֆրանսիական ակադեմիայի անդամ:

32 **Թովմաս Չալմերս** (1780-1847), շոտլանդացի կրոնական գործիչ, աստվածաբան, տնտեսագետ, շոտլանդական Ազատ եկեղեցու առաջնորդը: Աշխատությունները գլխավորապես դավանաբանական բնույթի են՝ ուղղված քրիստոնեության և գիտության հաշտեցմանը, սակայն գրել է նաև հողերի բարեբերության, կապիտալի կուտակման, աղքատների օգնության և այլ թեմաներին նվիրված աշխատություններ:

33 **Լուի Ժան Ժոզեֆ Բլան** (1811-1882), ֆրանսիացի սոցիալիստ, պատմաբան, լրագրող, 1848 թ. հեղափոխության գործիչ: Ունենալով ազնվականական ծագում, պայքարել է հանուն սոցիալական հավասարության հաստատման: Սոցիալ-տնտեսական հայացքները հիմնականում շարադրված են «Աշխատանքի կազմակերպում» (L'Organisation du travail) գրքում: Բլանը, հենվելով Մեն Սիմոնի գաղափարների վրա, սկզբում իր սոցիալիզմի առանցքն էր դարձրել «հասարակական արհեստանոցների» գաղափարը, որտեղ աշխատողները պետք է ստանային հավասար աշխատավարձ: 1847 թ., սակայն, նա հրաժարվեց հավասար վարձատրության գաղափարից և առաջ քաշեց համամասնական հավասարության գաղափարը, որի էությունն արտահայտվում էր «Յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ պահանջմունքի» կարգախոսում:

34 Տե՛ս **Выршиков А.Н.** и др., Теория социальной работы (учебно-методическое пособие), часть 1., Волгоград, 1999, с. 28:

րացիոն հոսքերը քաղաքներում ձևավորեցին մեծ թվով սոցիալապես խոցելի (մարգինալացված) խմբեր, որոնք քաղաքային կյանքին վատ հարմարվելու հետևանքով հայտնվում էին կյանքի տարաբնույթ դժվարին իրավիճակներում:

Հասարակական արտադրության, մարդու բնական նյութաիրային ոլորտի ընդլայնումն ու բարդացումը մեծացրին պետության ու խոշոր արդյունաբերական կորպորացիաների շահագրգռվածությունը՝ աշխատողների մասնագիտական որակավորվածության և աշխատունակության բարձրացման, նրանց բարեկեցության ապահովման գործում, որի արդյունքում էլ հասարակական կյանքի այլ ոլորտներից տարանջատվեց սոցիալական ոլորտը՝ որպես որոշակի նեղ-մասնագիտական գործառույթներ ենթադրող ոլորտ:

19-20-րդ դարերի սահմանագլխին սոցիալական լարվածության աճն ու աշխատավորների՝ իրենց իրավունքների համար պայքարի ակտիվացումը ստիպեցին պետություններին ու տնտեսական կորպորացիաներին փնտրել հակասությունները խաղաղ ձանապարհով լուծելու և լարվածությունը թուլացնելու ուղիներ: Այդպիսի ուղիներից մեկն էլ սկսեց դիտվել սոցիալական աշխատանքի տարբեր ձևերի լայն ցանցի ստեղծումը:

Օգնության պետական պարադիգմայի հետագա զարգացումը հանգեցրեց **օգնության հասարակական-պետական պարադիգմայի** ձևավորմանը: Պետք է նշել, սակայն, որ Ռուսաստանում դրա առաջին տարբերակն է հայտ էին եկել ավելի վաղ՝ դեռևս 1775 թվականին, երբ Եկատերինա 2-րդը «օրինականացրեց» աջակցության, պաշտպանության և վերահսկողության ինստիտուտը, որի արդյունքում «խնամակալություն» եզրույթը դարձավ «հասարակական խնամակալություն»<sup>35</sup>:

Օգնության հասարակական-պետական պարադիգման բնութագրվում է նրանով, որ խնամակալությունը ձևավորվում է որպես մի համակարգ, որտեղ արտացոլված են ոչ միայն պետական, այլև հասարակական կառույցները: Ոչ պետական կառույցների գործունեությունը ևս դառնում է պետության սոցիալական քաղաքականության խնդիրը կամ մասը: Այս պարադիգմայի շրջանակներում օգնության փիլիսոփայությունը կառուցվում է ելնելով ոչ միայն պետության նորմատիվային պահանջներից, այլև այդ հիմնախնդիրների լուծմանն ուղղված հասարակական բարեգործության տեսանկյունից: Հասարակական բարեգործությունն այսուհետ սկսեց հանդես գալ որպես պետության համար որոշակի անհրաժեշտ տնտեսական շահ պարունակող հասարակական ծառայություն: Այստեղից էլ աղքատների նկատմամբ հոգածությունը, կրթության անվճար տրամադրումը և հիվանդությունների բուժումը հանդես են գալիս որպես հասարակության՝ բարեգործության միջոցով բավարարվող սոցիալ-տնտեսական պահանջունքներ:

Ավելի լայն իմաստով բարեգործությունը հանդես է գալիս որպես հասարակական ուժերի հատուկ սոցիալ-մշակութային արձագանք պատմականորեն պանդեմիկ հանգամանքների, այսինքն՝ այնպիսի օբյեկտիվ երևույթների նկատմամբ, որպիսիք են սովը, համաճարակները, պատե-

35 Выршиков А.Н. и др., նշվ. աշխ., էջ 27:



րագմները, որոնց դեպքում միաժամանակ տառապում են մեծ թվով մարդիկ<sup>36</sup>:

Ռուսաստանում, օրինակ, 19-րդ դարում կարիքավորներին օգնելու գործում արդեն պետությունից բացի մասնակցում էին նաև եկեղեցին՝ ծխական համայնքների համակարգի միջոցով և մասնավոր անձինք ու հասարակական կազմակերպությունները: Այդուհանդերձ, դրանք դեռևս պետության համեմատ շարունակվում էին դիտվել որպես սոցիալական օգնության օժանդակներ կամ կիսասուբյեկտներ:

## 5. Սոցիալական քաղաքականության զարգացումը Եվրոպայում 19–20–րդ դարերում (մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը)

Շտապօգնությունների մեծ մասը ընդհանուր առմամբ հակված է այն կարծիքին, որ սոցիալական քաղաքականության ժամանակակից մոդելների հիմքը դրվել է հենց 19-րդ դարում և առաջին հերթին՝ Մեծ Բրիտանիայում: Անգլիացի գիտնական Ս. Միլլերի կարծիքով՝ հենց արդյունաբերական հասարակության ծագման հետ (որը հանգեցրեց քաղաքային բնակչության գերկենտրոնացմանը<sup>37</sup>, տրանսպորտային միջոցների կտրուկ զարգացմանը, ուսյալ բանվորական ուժի և ազգային քաղաքական ու վարչական համակարգեր ունենալու պահանջմունքների աճին, ինչպես նաև սոցիալական աջակցության ու վերահսկման ընտանեկան և համայնքային ավանդական համակարգերի արագ տեմպերով քայքայման խնդիրների առաջացմանը) պետությունը ձեռք բերեց ժամանակակից սոցիալական քաղաքականության և դրա ինստիտուտների զարգացման պահանջմունք և հնարավորություն<sup>38</sup>:

Բնակչության և ուրբանզացիայի աճի նման տեմպերի թելադրանքով Մեծ Բրիտանիան, իսկ քիչ ավելի ուշ նաև եվրոպական այլ պետությունները, նախաարդյունաբերական շրջանի հին կարգերից աստիճանաբար վերաաճեցին սրընթացորեն փոփոխվող հասարակատնտեսական հարաբերությունների հետևից հասնող ճկուն կառավարման համակարգերի:

Այդուհանդերձ, սոցիալական հիմնախնդիրներին լուծումներ տալը հեշտությամբ չէր իրականանում: Օրինակ՝ երբ Է. Չադվիկը<sup>39</sup> իր համախոհների հետ փորձում էր Բրիտանիայում ներդնել աղքատներին համեստ, սակայն կանոնավոր կերպով օգնություն ցույցաբերելու և դրա վերահսկման ինստիտուցիոնալ համակարգ, հանդիպեց հարկատուների լուրջ դիմադրությանը, մասնավորապես՝ անշարժ գույքից գանձվելիք եկամտահարկի հարցում: Նույն կերպ լուրջ դիմադրության հանդիպեցին

36 Տե՛ս **Выршиков А.Н.** и др., նշվ. աշխ., էջ 27:

37 19-րդ դարում Անգլիայում և Ռուսում բնակչության թիվը կրկնապատկվեց, Շոտլանդիայում՝ գրեթե եռապատկվեց: Դրան զուգահեռ, Բիրմինգեմ քաղաքի բնակչությունը հարյուր տարվա ընթացքում ավելացավ գրեթե 11, իսկ Գլազգոյինը՝ 12 անգամ: Տե՛ս **Смирнов С.Н., Сидорина Т. Ю.** Социальная политика, М., 2004, с. 117.

38 Տե՛ս նույն տեղում:

39 **Էդվին Չադվիկ** (Chadwick) (1800–1890), Անգլիայի սոցիալական առողջապահության ոլորտի գործիչ, իրավաբան, սանիտարական վիճակագրության հիմնադիրը, «Աղքատների մասին» օրենքի ընդունման նախաձեռնողը, պայքարում էր մանկական աշխատանքի շահագործման դեմ, ինչպես նաև բանվորների աշխատանքի սոցիալ-առողջապահական պայմանների բարելավման համար:

նաև առողջապահության ոլորտի բարեփոխումները:

Օգնության պետական համակարգերի ձևավորման գործընթացը դժվարին ու հակասական էր՝ կապված ինչպես եկեղեցական որոշ գաղափարախոսությունների, այնպես էլ դրանց ազդեցությամբ ձևավորված հասարակական հոգեբանության դիմադրության հետ: Օրինակ՝ Հյուսիսային Ամերիկայի ու Եվրոպայի մի շարք երկրներում օգնության պետական պարադիգմայի ձևավորման վրա զգալի ազդեցություն ունեցավ նաև բողոքականությունը, որի բարոյականության առանցքային սկզբունքը կարևորում էր անհատի աշխատասիրությունը, ինքնակարգապահությունը, խնայողականությունը, իսկ ուրիշներից կախվածությունը համարվում էր ամոթալի: Պատահական չէր, որ ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում, օրինակ, աղքատների օթևանի ծառայություններից օգտվողները երկար ժամանակ համարվում էին ոչ լիարժեք քաղաքացիներ՝ զրկվելով ընտրական, ինչպես նաև ազատ տեղաշարժի իրավունքներից: Նրանք երբեմն նաև ստիպված էին հագնել շորեր, որոնց վրա գրված էր մեծատառ «P»՝ «poor-house» (աղքատների օթևան) բառի սկզբնատառը, որը մատնացույց էր անում նրանց ցածր սոցիալական կարգավիճակը:

Անգլիայում «Աղքատների մասին» առաջին օրենքն ընդունվել է դեռևս 1661 թվականին, որի հիման վրա Միացյալ թագավորության տարբեր տարածաշրջաններում աղքատների տարբեր կատեգորիաները ստանում էին տարբեր չափի օգնություններ՝ կախված տվյալ տեղական իշխանության ցանկությունից և հնարավորություններից: Արդյունքում ստացվում էր, որ որոշ տեղերում տրված օգնության շնորհիվ չբավորների վիճակն ավելի նախընտրելի էր դառնում, քան վարձու աշխատողներինը, որի հետևանքով նվազում էր վարձու աշխատանք կատարելու շահագրգռությունը և աշխատող շատ բանվորներ նախընտրում էին թողնել վարձու աշխատանքը՝ աղքատների շերտում հայտնվելու և սոցիալական օգնություն ստանալու համար: Այդ իսկ պատճառով 1834 թ. Բրիտանիայում ընդունվեց «Աղքատների մասին» նոր օրենք, որի հիմքում դրվեց «քիչ նախընտրելիության» սկզբունքը: Նոր օրենքի նպատակը վարձու աշխատողների կյանքի պայմանները թեկուզև ամենաբարձր դասի ներկայացուցիչ հանդիսացող նպաստառու աղքատների համեմատ ավելի նախընտրելի դարձնելն էր:

## 6. Օգնության սոցիետալ մոդելը որպես օգնության պետական պարադիգմայի դրսևորման առանձնահատուկ ձև

Տարբեր երկրներում օգնության պետական պարադիգմայի ձևավորումն ունեցել է տարբեր ընթացք: Ռուսաստանում, մասնավորապես, վերջինիս ձևավորումն սկսվում է Մոսկվայի շուրջը ռուսական հողերի միավորման շրջանից և ամբողջանում է 19-րդ դարակզբին: Այդ շրջանում փոխվում է նաև օգնության տեսական դոկտրինը: Առ այդ՝

1. Քրիստոնեական հասկացությունները լրացվում են վարչական և իրավաբանական բնույթի հասկացություններով (օրինակ՝ Իվան Ահեղի «Դատաստանագիրքը», որով պաշտոնապես սոցիալական օգնության սուբյեկտ է հռչակվում միապետը):

2. Փոխվում է աղքատության ինստիտուտի նկատմամբ վերաբերմունքը. վերջինիս մեջ մարդիկ արդեն ոչ միայն սրբություն են տեսնում, այլև մարդու ապրելակերպի ոչ նորմալ վիճակ: Մարդը սահմանվում է ոչ միայն որպես Աստծո կողմից արարված և ապրելու իրավունք ունեցող էակ, այլև որպես գործիչ, հասարակայնորեն օգտակար աշխատանքի կրող:

3. Սոցիալական օգնության գործընթացը, օբյեկտի և սուբյեկտի ինստիտուտները դիտարկվում են միայն հրամանագրերի ու որոշումների շրջանակներում, որոնք էլ հանդիսանում են պաշտոնական նորմատիվային չափորոշիչներ, նորմատիվային արժեքներ: Օգնության գործընթացը սկսում է հենվել այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են՝ գործունեություն, աշխատանք, օգուտ բերելու հնարավորություն կամ անհնարիություն և այլն:

4. Ծագում է սոցիալական օգնության օբյեկտների (շահառուների) այլ տիպաբանություն, երբ նրանց տարբերակումն իրականացվում է ոչ թե հոգևոր և մարմնական գթասրտության սկզբունքներով, այլ հասարակության համատեղ կենսագործունեությանը մասնակից լինելու հնարավորություններով:

Այս ամենի արդյունքում շահառուի նկատմամբ աստվածաբանական մոտեցումները փոխարինվում են սոցիետալ մոտեցումներով, երբ առանձին մարդու ճակատագիրը դիտարկվում է ոչ թե հավերժության, այլ հասարակության մերձակա (տեսանելի) կարիքների ու հիմնախնդիրների, կենսագործունեության նորմերի ու արժեքների ենթատեքստում: Սոցիետալ մոտեցման արտահայտություն է դառնում նաև օգնության ցուցաբերման ինստիտուցիոնալացման խորացումն ու նորմատիվացումը:

Սոցիետալ մոտեցման հիման վրա ձևավորվեց օգնության պետական պարադիգմայի մեկ այլ դրսևորում՝ **օգնության սոցիետալ մոդելը**, որն առավել լայն կիրառում գտավ Ռուսաստանում 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո (հետագայում՝ նաև ԽՍՀՄ-ում): Օգնության սոցիետալ մոդելը հիմնվում է հասարակության՝ սոցիետալ համակարգ լինելու մասին դրույթի վրա, որի համաձայն վերջինս ունի ինքնավերատադրության հատկություն և իրականացնում է մի շարք անհրաժեշտ և տարբերակված գործառույթներ: Այդ գործառույթներն ամենից առաջ աշխատանքի հասարակական բաժանման հետևանք են, բայց լրացնելով միմյանց և փոխազդելով իրար հետ հասարակությանը տալիս են հատուկ օրգանիզմի բնույթ: Ուստի հասարակությունը, որպես ինքնակազմակերպվող օրգանիզմ, պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերի իր տարբեր անդամների կամ ամբողջական օրգանիզմի տարբեր օրգանների նկատմամբ՝ ելնելով հասարակական օրգանիզմի վերատադրության ու զարգացման գործում վերջինների ունեցած դերակատարության նշանակալիության աստիճանից, այսինքն՝ պետության կողմից հասարակության անդամներին ցուցաբերվելիք օգնության հիմքում ևս պետք է ընկնի այդ անդամների հասարակական օգտակարության չափանիշը:

Այս մոդելում դեռևս օգնության արխայիկ մոդելից հայտնի ռեցիպրոկացիոն վարքը բնորոշող հիմնարար հասկացությունն ու խորհրդանիշը

դարձավ «սոցիալական ապահովություն» հասկացությունը<sup>40</sup>:

Խորհրդային Ռուսաստանում (այդ թվում՝ ԽՍՀՄ առաջին 40-50 տարիներին) սոցիալական օգնության պետական համակարգում գրեթե բոլոր որոշումները կրում էին քաղաքական բնույթ, որտեղ անձի հիմնախնդիրների նկատմամբ գլխավոր պահանջը ներկայացվում էր՝ ելնելով նրա դասակարգային պատկանելությունից և պետության նկատմամբ ունեցած ծառայություններից:

Այդ տարիներին սկսեցին վերարտադրվել հնագույն ընտանե-աշխատանքային հանրայիններում կիրառվող օգնության ու աջակցության կոլեկտիվ-արխայիկ այնպիսի ձևեր, որպիսիք էին շաբաթօրյակները, ինչպես նաև կորպորատիվ հանրայինների պաշտպանության ու աջակցության այնպիսի ենթահամակարգեր, ինչպիսիք են մանկության պաշտպանության ինստիտուտները (մտուր-մանկապարտեզ, պիոներական ճամբար), աշխատուժի արտադրական վերարտադրությանն աջակցող ինստիտուտները (առողջարաններ, պրոֆիլակտորիումներ, հանգստյան տներ, սպորտառողջարանական բազաներ և այլն)<sup>41</sup>:

Պետությունը կրկին դարձել էր սոցիալական օգնության հիմնական և նույնիսկ միակ սուբյեկտը: Սոցիալական ապահովության կոմիսարիատը, ապա նաև համանուն մինիստրությունը վարում էին կենտրոնացված քաղաքականություն կենսաթոշակային ապահովության, հաշմանդամների, միայնակ և բազմազավակ մայրերի, ծնողազուրկ երեխաների աջակցության ուղղությամբ: Զարգանում էին սոցիալական ապահովագրության համակարգը, սոցիալական աշխատանքի (այսօրվա ընկալմամբ) առանձին ուղղությունները, արհմիութենական կազմակերպությունների, աշխատանքային կոլեկտիվների, մունիցիպալ մանկավարժության համակարգերը և այլն: Պետական որոշումներով էին սահմանվում օգնության ենթակա հաճախորդների (սոցիալական օգնության օբյեկտների) տիպերը:

## Եզրափակիչ դրույթներ

### Ամփոփելով՝ նշենք.

Սոցիալական օգնության հարաբերությունները մինչև պետական սոցիալական օգնության ժամանակակից համակարգերին հասնելը անցել են պատմական բարդ ու հակասական ճանապարհ՝ կրելով զանազան գաղափարաարժեքային համակարգերի բազմազան ազդեցությունները և նույն գաղափարական պարադիգմի ներքո ունենալով ամենատարբեր դրսևորումներ:

Սոցիալական օգնությունը ի վերջո մարդ-մարդ հարաբերություն է, իսկ մարդը՝ որպես ճանաչողության և գործողությունների օբյեկտ և սուբյեկտ, բազմակողմ է, հետևաբար բազմազան են լինելու նաև այդ հարաբերությունների մասին տեսական պատկերացումների համակարգերը, չի կարող լինել «Մարդ» բազմակողմ համակարգի և նրա հարաբերությունների բացարձակ միասնական նմուշօրինակ: Մարդու և մարդկային հա-

40 Выршиков А. Н. и др., Теория социальной работы (учебно-методическое пособие), часть 1., Волгоград, 1999, с. 28.

41 Նշվ. աշխ., էջ 29:

րաբերությունների մասին ցանկացած հասարակական գիտություն, այդ թվում՝ սոցիալական օգնության գիտական կազմակերպման կարևորագույն տեսագործական բնագավառներից մեկը՝ 19-20-րդ դարերի սահմանագլխին ձևավորված սոցիալական աշխատանքը, նույնպես բազմապարադիգմալ է:

Սոցիալական աշխատանքում սոցիալական օգնության հարաբերությունների մասին միասնական պարադիգմայի, ավանդույթի կամ համընդհանուր ճանաչում ձեռք բերած տեսության բացակայությունը չի կարող դիտվել որպես ճգնաժամի կամ լճացման նախանշան:

Այդուհանդերձ, դա չի նշանակում, որ որևէ պետություն բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում (այ թվում՝ սոցիալական օգնության ուղղությամբ) կարող է վարել որևէ գաղափարական ուսմունքի, տեսական հայեցակարգի վրա չհիմնված կամայական քաղաքականություն: Այս առումով, մեր պետության համար սահմանադրորեն արդեն կանխորոշված է սոցիալական քաղաքականության վարման առավել ընդհանուր դոկտրինը կամ ուսմունքը: Դա **սոցիալական պետության դոկտրինն է**: «Սոցիալական պետություն» հասկացությունը, սակայն, շրջանառության մեջ մտնելուց հետո ունեցել է և այսօր էլ ունի ինչպես տեսական տարբեր մեկնաբանություններ, այնպես գործնական դրսևորումների պատմական տարբեր ձևեր՝ սկսած խորհրդային տիպի սոցիալիզմից մինչև «համընդհանուր բարեկեցության պետության» ժամանակակից հայեցակարգի տարբեր ընկալումները:

Տեսական այդ բազմազանության մեջ ճիշտ կողմնորոշվելու համար սոցիալական պետության կառուցման ուղին որդեգրած պետության բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում արմատական բարեփոխումներ իրականացնող բոլոր անձինք և առաջին հերթին պետական պաշտոնյաները պետք է հստակորեն պատկերացնեն սոցիալական պետության՝ մեր երկրի համար նախընտրելի մոդելը կամ մոդելները՝ վերջինները կյանքի կոչելուն ուղղված անկեղծ ու արդյունավետ ջանքեր գործադրելու համար: Սոցիալական պետության դոկտրինի էությունը, դրա վերաբերյալ պատմականորեն ձևավորված տեսական պատկերացումների և գործնական դրսևորումների առանձնահատկությունները առանձին քննարկման խնդիրներ են:

**Վարդան Պ. Գևորգյան** – զբաղվում է ՀՀ բնակչության տարբեր խմբերի սոցիալական պաշտպանության և միգրացիայի ոլորտների հիմնահարցերի ուսումնասիրությամբ: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են նաև բարոյամշակութային արժեքները, ազգային ինքնության և ազգային քաղաքականության հարցերը, հասարակությունում տեղի ունեցող փոփոխությունների սոցիալական հետևանքները, ՀԿ-ների և ժողովրդավարական այլ հաստատությունների կայացման, ԶԼՄ-ների անկախության, խոսքի ազատության, աղքատության, մարդկային զարգացման հետ կապված հիմնախնդիրները: Հեղինակել է այդ հիմնահարցերին նվիրված երկու գիրք և ավելի քան երկու տասնյակ հոդված:

## Summary

### STATE SOCIAL ASSISTANCE SYSTEMS,

#### In the scope of underlying theoretical perceptions

Vardan P. Gevorgyan

**Key words** – social assistance, social policy, social security, social protection, archaic paradigm of social assistance, Christian paradigm of aid, state paradigm of aid, socio-state paradigm of aid, societal model of aid, social state.

For making effective reforms aimed at the social protection of the population including social assistance/ support it is very important to take into account the experience historically gained by the humanity in this field, the progress in shaping the modern social assistance systems and the underlying ideological and value systems. Otherwise even the kindest motivations for creating modern systems will not make it possible to avoid the old institutes of social assistance/support that did not survive to their goal, had no underlying particular ideological and valuable concepts and pursued just momentary goals. The policies, mechanisms and methods implemented through such institutes may at least bring to unnecessary waste of expensive resources and in most dangerous cases lead to deterioration of the state of certain groups in population by bringing about numerous undesirable consequences for the country and society going as far as undermining the public stability and causing turbulences. To support the current reforms in the social assistance to the population in Armenia the article entitled Historical and Theoretical Issues on Formation of Modern Public Social Assistance Support Systems through description of certain theories shows biosocial prerequisites of the phenomenon of social assistance/support, as well as presented the ideological and theoretical features of the main historically-shaped social assistance models (archaic, Christian, state, public and state paradigms of social assistance and societal assistance model).

The main conclusion following the analysis of the ideological and theoretical systems above is that at the current stage of reforms the Republic of Armenia should be guided by the welfare state doctrine. In this regard the most important scientific and practical task of the public administration system is to specify the state's most preferable model or models .

## ГОСУДАРСТВЕННЫЕ СИСТЕМЫ СОЦИАЛЬНОЙ ПОМОЩИ

### В рамках теоретических представлений

Вардан П. Геворгян

**Ключевые слова** – социальная помощь, социальная политика, социальное обеспечение, социальная защита, архаическая парадигма социальной помощи, христианская парадигма помощи, государственная парадигма помощи, социально-государственная парадигма помощи, социетальная модель помощи, социальное государство.

Для эффективного осуществления реформ в области социальной защиты населения, включая социальную помощь, очень важно учитывать накопленный в истории человечества опыт, овладеть знаниями относительно процесса формирования современных моделей социальной помощи и идейно-ценностных систем, лежащих в их основе. В противном случае, при всех добрых намерениях, невозможно будет избежать создания старых, не оправдавших себя в историческом плане и не основанных на четких идейно-ценностных концепциях институтов, преследующих лишь сиюминутные цели. Проводимая политика, применяемые механизмы и методы деятельности таких институтов, по меньшей мере, могут привести к ненужной трате дорогостоящих ресурсов, а что наиболее опасно – к ухудшению положения определенных групп населения, что чревато многочисленным нежелательным последствиям для страны и общества, включая нарушение общественной стабильности и серьезные потрясения.

С целью поддержки реформ в области социальной помощи населению РА, в статье были показаны биосоциальные предпосылки возникновения в обществе феномена социальной помощи, а также идейно-теоретические особенности основных исторических моделей социальной помощи (архаическая, христианская, государственная, общественно-государственная парадигма социальной помощи и социетальная модель).

Основной вывод, сформулированный в результате анализа этих идеологических систем, заключается в том, что на нынешнем этапе реформ Республика Армения должна ориентироваться на доктрину социального государства. В связи с этим наиболее важной научно-практической задачей системы государственного управления становится определение наиболее предпочтительной для страны модели (или моделей) социального государства.

## REFERENCES

1. **Asryan A.**, Socialakan diakonia. Hay arakelakan ekeghecu socialakan ashxatankə yev artasahmanyān pordzi kirarumə Hayastanum // [http://www.religions.am/index.php?option=com\\_content&view=article&id=13:astghik-diakonia&catid=1:2009-02-27-03-45-54/](http://www.religions.am/index.php?option=com_content&view=article&id=13:astghik-diakonia&catid=1:2009-02-27-03-45-54/) (**In Armenian**)
2. **Firsov M. V.**, Vvedenie v teoreticheskie osnovi sotsialnoy raboty (Istoriko-poniatinny aspekt), M.: Institut prakticheskoy psikhologii, Voronej, MODEK, 1997 (**In Russian**)
3. **Grishin M.**, Problemy Afinskogo Gosudarstva 1-oy poloviny d. n. e. // <http://centant.spbu.ru/centrum/publik/confcent/2001-03/grishin.htm> (**In Russian**)
4. HH Ashkhatanki yev Socialakan harceri Naxararutyun-90. Taregrutyun (1918-2008), Yerevan-2008 (**In Armenian**)
5. **Kropotkin P. A.**, Etika. Proiskhozhdeniye i razvitiye nrvstvvennosti. M.: Politizdat, 1991 (**In Russian**)
6. **Krotov Ya.**, Social'naya Pomoshch // [http://krotov.info/spravki/temy/p/pomosch\\_soz.html](http://krotov.info/spravki/temy/p/pomosch_soz.html)) (**In Russian**)
7. MAZTS-Armenia, Mardkayin Zargacman Azgayin Zekuyc-2009, "Migracia ev Mardkayin Zargacum: Hnaravorutyunner ev martahraverner" (**In Armenian**)
8. **Smirnov S. N.**, Sidorina T. Yu., Social'naya Politika, M., 2004 (**In Russian**)
9. «Sotsial'no-ekonomicheskiye otnosheniya i sotsionormativnaya kul'tura». – M., „Nauka”, 1986 (**In Russian**)
10. **Sorokin P. A.** Sotsiologia Revolucii, M-Astrel, 2008 (**In Russian**)
11. **Vyrshchikov A. N.**, i drugie, Teoria sotsialnoj raboty (uchebno-metodicheskoe posobie), chast 1., Volgograd-1999 (**In Russian**)